

ԳՐԱԴԱՐԱՆ

ԹԱՏԵՐԳԱԿԱՆ

22

ՍԱՐԳ
ԵՐԻԱՆ
ՏՈՆ ՏՏ.
ՄԱՍՏ



22

891.09

4-

Ա՝

ԿԵՂԾ ՈՍՏԻԿԱՆԱՊԵՏԸ

ՇՔԵՂ ԿԱՏԱԿԵՐԳՈՒԹԻՒՆ
ՄԷԿ ԱՐԱՐ

Բ.

ՊԱՆՏՈՒՆԻ ՃԱՇԸ
ԿԱՄ

ԱԿԱՆՋԻ ԿԵՐԱԿՈՒՐԸ
ՄԷԿ ԱՐԱՐ

A I
6026

ՎԵՆԵՏԻԿ Ս. ՂԱԶԱՐ
1980

ՀՍՍՐ ԳՐԱԴԱՐԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ
ԳՐԱԴԱՐԱՆ № 2
ՄԵՂԻՏԻՆԱ

ՀԱՆՐԱՆՈՒՄ ԳՐԱՏՐԱՆ
HARRY G. BERTELIAN
837 WASHINGTON ST.
BOSTON MASS

ԿԵՂԾ ՈՍՏԻԿԱՆԱՊԵՏԸ

ԳՐԵՑ

ՅՈՎԱՍԷՓ ՊԵՐԻԿՈՑ

ԹԱՐԳ ԱՆԵՑ

Հ. ՅԱԿՈՎԲ Վ. ՏԻՐՈՅԵԱՆ

Ա Ն Ջ Ի Ն Ք

ԱՍՊԵՏ ՍՈՒՐԷՆ } Ոստիկանապետ Հ. Ա.

Պ. ԳԵՂԱՄ } Նուիրակ Հ. Ա.

ԳԱՍՊԱՐ }
ԶԱՐԵՀ } Ոստիկաններ Հանրային Ապահով:
ՌՈՒԲԷՆ }

Պ. ԴԱԻԻԹ

Պ. ԳԻՍԱԿ

ՍԻՍԱԿ *անուանարկ ոմն*

ԳԱՐԵԳԻՆ ԴԻՄԱՔՍԵԱՆ *անգործ ոմն*

Պանդոկի ծառայ մը

Հեռախօսի պաշտօնեայ մը

ԿԵՂԾ ՈՍՏԻԿԱՆԱՊԵՏԸ

Ներկայացուցողը արդի ժամանակս խոսչ
լիոյ քաղաքի մը մեջ տեղի կ'ուշենեայ:

ԱՐԱՐՈՒԱԾ ՄԻԱԿ

Ա. Ա. ի Հանրային ազատութեան պաշտօնարանը պարզ և շուրջ, գրքերով զարդարուած: Խորը՝ քաղաքացեալարանը. կողմնակի դռներ: Ժողովրդեան ձախակողմը գրասեղան մը. աջակողմը քանի մը արուներ ապիս անդին գրուած. — Գիմացի պատին վրայ՝ աջ կողմը գրադարան մը. ձախ կողմը՝ ձեռախօս մը: — Գրասեղանը գրեթէ ծածկուած կ'երևի գիրքերով, երկայնածոյ վերարկուներ . . . : Գրասեղանին ետեւը՝ որուն վրայ ձրագ մը կը վառի, կրակարան մը կայ: — Այս ատենը խնամքով մը գետեղուած կ'ըլլան:

Տ Ե Ս Ի Լ Ա Ռ Ա Զ Ի Ն

Գ.Ա.Ս.Պ.Ա.Ր. միայն, յետոյ Զ.Ա.Ր.Ե.Ն.

Գրասպար. — (Բեմին վրայ կանգուն, ձեռքը՝ գրպանի ձայնի մը բռնած, ընչազքը շտկելու գրադած է): Հո՛ն . . . մեծ տգեղութիւն մը չերեւիր. ստոյգ է որ իմս՝ յունական կիսադէմք մը չէ, բայց անոր տեղ՝ ունիմ կուլիէլմոսական մեծ պեխեր որ . . . բայց ի՞նչ ունի

այս թշուառականը որ չուզեր ուղիղ կենալ ... (պիխը շակերով՝ յուզուած) այո՛ ... կը հասկնամ ... սակայն անկէ աւելի գէշերը կան ... և ... մոէ՛ ... մի՛ շարժիր ... շիփշիտակ ... այսպէ՛ս, ահա եղաւ. կը տեսնես որ յազթեցի ... ա՛հ. ա՛հ: (Գրպակը կը դնէ հայելիև և կը պատրաստուի ծոշիսի գրանիկներու տուփը հանել):

Չարեհ. — (քաղաքացւոյ զգեստ հագած՝ պայրոջիկի մը պես ներս կը մտնէ և գլխարկը կը նետէ սեղանի մը վրայ): Անճոռնի ... բարի լոյս Գասպար ...

Գասպար. — Ո՛հ, Չարեհ սիրելիս, և ...

Չարեհ. — (գրասեղանին վրայ ձրագը վաւուած տեսնելով) Բայց ի՞նչ կ'ընես դու այդ ճրագով ... կրողը տանի ... չե՛ս տեսներ որ լուսացեր է:

Գասպար. — Ի՛նչ կայ որ.

Չարեհ. — Առաւօտ եղեր և շատոնց անցեր է:

Գասպար: — Այո՛, բայց ...

Չարեհ. — (ուժով) Բայց չե՛ս տեսներ որ արևն ալ ծագեր է ... կրողը տանի քեզի.

Գասպ. — Գետինն անցնի ... ինչպէս դու կ'ըսես, բայց ի՛նչ բան կ'ուզես որ ընեմ:

Չարեհ. — (գայրացած) ճրագուն, գետինն անց ...

Գասպար. — Դո՛ւ անցնիս, հասկցայ ...

Չարեհ. — ձրագը.

Գասպար. — Ա՛հ, ձանձրացուցիչ, և ո՞վ կրնայ հասկնալ քու լեզուդ. սպասէ՛, սպասէ՛ որ գլանիկս վառեմ: Մենք Հանրային ապահովութեան խեղճ պահապաններս ինայողութիւն պէտք է ընենք ամէն բանի մէջ, լուցկիներու վրայ ալ ...

Չարեհ. — Գետինն անցնի ցուրտը, ձիւնը ... և հիմայ որ կծկուած եմ այս մարմնոյն մէջ:

Գասպար. — Ի՛նչ ունիս որ ինձի գայրացածի

պէս կ'երեւիս : Իմ սերելի Զարեհս հո՛ս եկուր ... հո՛ս եկուր ... ծուխի գլանիկ մ'ա՛ռ. ասիկա նշանաւոր դեղ մըն է գրգռուած ջիդերու դէմ :

Զարեհ. — Շնորհակա՛լ եմ :

Գասպար. — Ծխէ՛, ծխէ՛ :

Զարեհ. — Յօժարութիւն չունիմ :

Գասպար. — Օ՛ն ուրեմն, ծխէ՛ ...

Զարեհ. — (ուժգիւն) Կամք չունիմ, և եթէ սուտ կ'ըսեմ, ապտա՛կ մ'ի՛նծի :

Գասպար. — (ծուխը գրպանը դնելով) Աւելի աղէկ :

Զարեհ. — (ուժով) Է՛հ ...

Գասպար. — Այո՛ ... աւելի աղէկ, վասն ... զի ... և (մէկէն) ճիշտ տեղն է, Պ. Նուիրակին խնդիրը :

Զարեհ. — Ոստիկանապետին տունը գացեր է տեսնելու համար թէ ի՞նչպէս :

Գասպար. — Ա՛հ, նուազագոյն չարը : Կէս ժամ կ'ընէ, տե՛ս, ստիպողական հեռագիր մը հասաւ : Ըստ սովորութեան ես Ռուբէնին ձեռքով զրկեցի զայն Պ. Ոստիկանապետին տունը, եվերջինս ինձի շուտ մը հեռախօսեց որ իրեն զրկեմ Պ. Նուիրակը. բայց որովհետեւ Պ. Նուիրակը քեզի հետ էր, այս կերպով Ռուբէնը զձեզ փնտռելու զրկեցի : Տեսա՛ր արդեօք զինքը :

Զարեհ. — Զո՞վ :

Գասպար. — Ռուբէնը :

Զարեհ. — Բնաւ ... այսօր երբեք անոր երեսը տեղած չեմ :

Գասպար. — Բա՛հ, փոյթ չէ, հիմա հոն գնացած կ'ըլլայ, այնպէս չէ՞ : Ի՞նչ կ'ըսես :

Զարեհ. — Կրօ՞ղը տանի ... թէ սուտ կ'ըսեմ ապտակ մ'ուտեմ :

Գասպար. — Կը հաւատամ ըսածիդ և կը խնայեմ քեզ ապտակը : Եւ ի՞նչպէս գնաց ուրեմն արշաւանքը :

Չարեհ. — Նուիրակը յիմարութիւն մը գործեց :
Գասպար. — (ձեռացնելով) Յիմարութիւն մը :
 Ի՞նչ բանի մէջ ...

Չարեհ. — (որ զնացած կ'ըլլայ կրակարանիկ
 մօտ) Բայց քիչ մը կրակ վառէ՛, չե՞ս տեսներ
 կը սառիմ, սաստիկ ցուրտ կ'ընէ : ...

Գասպար. — Քիչ մը համբերութիւն ունեցիր,
 վայրկեանէ մը հոս պիտի ըլլայ Ռուբէնը ... և

Չարեհ. — Ի՛նչ. Ռուբէն ... Ռուբէն ... անի-
 կա խենթին մէկն է ... դու առնն մը դեռ
 պիտի սպասես Ռուբէնին : Բայց վառէ՛ սա
 կրակը. արծան մը կ'երեւիս ինձ ... գեաինն
 անցնի :

Գասպար. — (մինչդեռ կրակը կը վառէ) Ճիշդ
 որ ջիղերդ ոտք ելեր են, սիրելիս, այս առա-
 լօտ ... ծխէ՛ ... դեղ մ'է ասիկա որ չի
 սխալիր գրգռուած ջիղերու դէմ ... : (Չարեհը
 ձեռացնելով) Ահա կրակը վառուած է ...
 մօտեցիր անոր ... գեաինն անցնիս :

Չարեհ. — (շուտով) ... Ապրիս լորամարգի ...
 հանճար մըն ես, տաղանդ մը. գլուխ մը ...
 ամենակարող ... տարածենք սրունքնիս,
 այսպէս ... թեւս կռթնցնելու աթոռ մը
 տո՛ւր ինձի ... (Գասպար կը գործադրէ)
 ա՛յսպէս, ապրի՛ս լորամարգի :

Գասպար. — Ուրեմն պատմէ՛, պատմէ՛ տեսնենք
 որչափ ձերբակալութիւններ ըրիք .

Չարեհ. — Բայց ինչ անյարմար խօսքեր բեր-
 նէդ կ'ելլէ : Յուսանք թէ Ոստիկանապետը
 բարի մէկը ըլլայ, ապա թէ ոչ, սիրելիս,
 ջուրը խիտ շատ պղտորած է :

Գասպար. — Բայց սուրճեփը ձեզի շատ ապա-
 հովցուցեր էր որ ...

Չարեհ. — Ծպտեալ սրճարան մտանք՝ ծածուկ
 դռնէ մը : Արճարանապետը իմացուց Նուիրա-
 կին թէ, անոնք որ փախուցեր էին կեղծ
 դրամները, սրահին մէջ զնդասեղանին տակ

կը գտնուին և հարկ եղած բոլոր նշանները տուաւ մեզի: Ներս մտանք, Նուիրակը պահ մը կեցաւ մտածեց. բայց յետոյ սրռչում տուաւ. բաց թողուցի դռները. երիտասարդ մը ձերբակալեցի որ երեսուն տարեկան մը պիտի բլլար. ի՞նչ է անունդ ... ցոյց տուր ինձի թղթապանակդ. ոչինչ. պայուսակդ ... ոչինչ ... և ինձի հրամայուեցաւ խուզարկել զինքը: Մինչ ևս այս գործին ետեւէ էի և Նուիրակը կեղծ դրամներուն երեւան գալուն կը սպասէր, միւս ընկերները դռները բաց տեսնելով ... , աներեսոյթ եղան:

Գասպար. — (ծիծաղելով) Ա՛հ, ա՛հ, ա՛հ.

Զարեհ. — Այն ատեն օրճարանապետը Նուիրակին ուսին գարկաւ ձեռքովը և ըսաւ մեզի: Զուագեղ մ'եփեցիք: Եղածը ճիշտ այսպէս է, և եթէ սուտ կ'ըսեմ ... ապտակ մ'ինձի: Գետինն անցնի:

Գասպար. — (ուժով) Գետնին տակը ...

ՏԵՍԻԼ ԵՐԿՐՈՐԳ

ԳԵՂԱՄ, ՆՈՒՐԱԿ և ՎԵՐԻՆԵՐ

Նուիր. — (կը մտնէ մինչ Գասպար կ'ըսէ «գետնին տակը»): Որո՞ւ կ'ուղղես այդ խօսքը:

Գասպար. — Ա ... ա ...

Զարեհ. — (չուտով) Այս կրակին որ չուզեր բռնկիլ:

Նուիր. — Շո՛ւտ, շո՛ւտ տղաքներ, քանի մը վայրկեանէն պիտի հասնի Նոր Ոստիկանապետը, ասպետ Սուրէն, այնպէս ըրէք որ ամէն բան կարգի մէջ գտնուի: Ո՞ւր է Ռուբէնը:

Գաւապար. — Անիկա դեռ զձեզ փնտռելու հետ է, Պ. Նուիրակ:

Նուիր. — Բայց ինչո՞ւ համար:

Գաւապար. — Վասն զի Պ. Ոստիկանապետը ստիպողաբար կ'ուզէր զձեզ, և ...

Նուիր. — Հասկցայ: Ինձի իմացնելու համար ասպետ Սուրէնի հասնիլը: Եւ հիմա այն անմիտ Ռուբէնը՝ ո՛վ գիտէ երբ պիտի դառնայ:

Գաւապար. — Կարող է ժուռ գալ բոլոր քաղաքը:

Նուիր. — Ապահովապէս: Եւ դու Զարեհ, չըլլայ թէ խօսք մը փախցնես բերնէդ երէկ զիշերուան հանդիպածին վրայ:

Զարեհ. — Մոնջ պիտի ըլլամ:

Նուիր. — Կեցցե՛ս: Տեսնենք թէ պիտի կարենամ իրենց որջերէն դուրս հանել այն սրիկաները, որոնք այնչափ մանելիք թել կուտան մեզի: Հասկցա՞ք ըսածս, և ո՛չ մէկ բառ համամիտ էք:

Զարեհ. — Կատարելապէս: Եթէ սուտ ըսեմ ... ասպտակ մը:

Գաւապար. — Դուք կը ճանչնա՞ք զինքը Պ. Նուիրակ:

Նուիր. — Հարցնելո՞ւ բան է թէ զինքը կը ճանչնամ: Նա Գիրէնցէի մէջ Նուիրակ էր, երբ ես դեռ պարզ պաշտօնեայ մ'էի: Բարի մարդ մը, մի՛ տարակուսիք (նեռախօսի գանգակը կը ննչէ. Նուիրակը նեռախօսիկ տաչէ) Պատրաստ ... այո՛ ... հէ՞ ... որո՞ւ ճաշարան ... կրկնէ՛ ... ա՛հ, Ազգային ... (դադար) վիրաւորուած ... դժբախտութիւն ... հիմա, հիմա (նեռախօսիկ գանգակը կը կախէ և հաղորդակցուչ թելը կը վերցնէ): Կոիւ մը Ազգային ճաշարանին մէջ, մարդ մը վիրաւորուած. հարկ է վազել շուտով: Դու Զարեհ, հետս եկուր, և դու Գաւապար

Ոստիկանապետին հասնելուն սպասէ: Պիտի հեռագրեմ:

Գասպար. — Ապա Ռուբէնը:

Երուսիմ. — Թող սպասէ (դուրս կելլի):

ՏԵՍԻՒ, ԵՐՐՈՐԴ

ԳԱՍՊԱՐ միայն եւ ներսէն ձայն.

Գասպար. — Է՛հ, իրաւունք ունէր այն մարդը, Հանրային Ազատութեան պահապաններս նմանցնելու շատ մը ծիրանի գօտիներու: Մենք կ'երեւանք ... հորիզոնին վրայ ... երբ մրրիկն արդէն անցեր է ... ինչ և իցէ:

Չայն. — (ներքոշուտ) կա՛թ ...

Գասպար. — Է՛հ ... կաթը ... Շատ լաւ, կու գամ (դուս կ'ելլի աջ կողմէն):

ՏԵՍԻՒ, ԶՈՐՐՈՐԴ

ԳԱՐԵԳԻՆ ԳԻՄԱՔՍԵԱՆ միայն
յետոյ հեռագրի պաշտօնկայն

Գիմարս. — (ծածուկ ներս կը նայի զննելով: Էրկայն, սեւ վերնագգեստ մ'ունի հագած աստրախանի մոշտակի օձիքով, կարկտած կօշիկներով, պիկ, ամրուած և մաշած գրչխարկով: Վերնագգեստը սիւնէն վիզը կոճկոշած՝ կը ծածկէ կարկատուն, գրերէ կեղտոտ հագուստ մը: Հագիւ թէ ներս կը մտնէ գլխարկը կը հանէ և կը դնէ միջ-

նապրան մօտ եղած արուսիկ վրայ: Անմօրուս
է, երկու վար կախուած պեխերով և ան-
խընամ մագերով: Ասկայն իր գնացքը ...
գրեթէ վսեմ է ... և կը մասնէ իր վիճակը):
Ներելի՞ է ... ներելի՞ է ... քայլ մ'առաջ
առնենք ... մէկը չկա՞յ ... տարօրինակ բան,
ի՞նչպէս կարելի է ... տե՛ս, նայէ՛, նայէ՛ մէկ
մը ... գիրենք փնտռելու ալ ըլլաս, կենդա-
նութիւն ցոյց չեն տար ... ջուրը բերնի՞ն
մէջ: Ա՛հ, եթէ յաջողիմ զիս ձերբակալել
տալ, նպատակիս հասած կ'ըլլամ, ... անիծած
անօթութիւն: Բայց ե՞րբ պիտի վերջացնեմ
օդով զիս կերակրելը: Շատ ժամանակ է որ
ծնօտներս պարապութեան մէջ կը շարժեմ ...
չմոռնալու համար ծամելու գործողութիւնը:
Իրք ... հանդերձեալ աշխարհին:

Հեռ. պաշտ. — Ներելի՞ է:

Գիւմարս. — (բնագոյարար) Առա՛ջ եկուր:

Հեռ. Պաշտ. — Հեռագիր մը (զայն կու տայ
անոր):

Գիւմարս. — Բայց ես չեմ ...

Հեռ. Պաշտ. — Փո՛յթ չէ, փո՛յթ չէ, կը վե-
րադառնամ ընկալագրին համար, պատրաստէ՛
զայն ստորագրուած ... մնաս բարով (կ'ելլէ):

Գիւմարս. — Բարո՛վ մնալ: Բէ՛հ, վերջապէս
մէկը հոս պիտի գայ, ասիկա անոր կը յանձ-
նեմ ... մանաւանդ թէ ... լաւագոյնը ...
միասին կը յանձնենք զմեզ, որովհետեւ անօ-
թութիւնը, Աստուած է որ հանճարը կը
ստեղծէ, կը սպաննէ անգործութիւնը, միտքը
կը սրէ և ապուշը իմաստուն կը դարձնէ,
ներշնչեց ինծի գողցած կեղծել բան մը ու
երթալ ձերբակալել տալ ինքզինքս: Ուրեմն,
ես որ ինքզինքս յանձնելու համար եկած եմ
հոս ... նախ այս հեռագիրը պիտի յանձնեմ:
Ի՛րք հանդերձեալ աշխարհին: Կեղծել՞ ըսի:
Սխալեցայ: Ստուգիւ լաւագոյն պիտի ըլլայ

րսել. գողցայ զայն ... մոռցայ իմ մաշած
 վերարկուս սրճարանի մը մէջ կեռին
 վրայ, անոր տեղ այս զգեստը ասնելու հա-
 մար: Ասիկա սխալմունք մ'է և ուրիշ ոչինչ
 աւելի: Ես պատրաստ եմ զայս ետ տալու
 երբ իմ վերարկուս ինծի վերադարձուի:
 Ուրե՛մն: Ա՛հ (զայրոյրի նօպայով մը կը
 պատռե՛ն նեւագիրը) բարբարոս և չարազէտ
 բախտ: Եւ ըսել թէ ես պիտի կարենայի
 միլիոնատէր ըլլալ ... ի՛րք հանդերձեալ աշ-
 խարհին ... միլիոնատէ՛ր ... հակառակաւ
 կը բաւէր որ ազքատ ծնանելու տեղ՝ հարուստ
 ծնած ըլլայի ... բայց հիմա անօթութենէ
 կը ճաթիմ (ուրիշ մեկ գօրաչորագոյն նօպա-
 յով մը, երկու կտոր կ'ընէ նեւագիրը) բար-
 բարո՛ս բախտ ... անէ՛ծք. հիմա անխելքու-
 թիւն մ'ըրի: Շատցուցի հեռագիրը (չորս
 կողմը նայելով) ի՞նչպէս ընեմ, ինչպէս ...
 ա՛հ, ահաւասիկ, զայն կրակին կը յանձնեմ
 և երթայ բարով ... ես բան մը չեմ գիտեր
 ... խարոյկին մէջ ... (կենարով, Ո՛հ ...
 կեցիր, սիրելի Գիմաքսեան, որովհետեւ ես
 չուզելով պատռուցի զայն, տեսնենք քիչ մը
 թէ ի՞նչ գրուած է անոր մէջ: Ոստիկանու-
 թեան մէկ գաղտնիքը իմանալը դիւրաւ չի
 պատահիր: (կը միացնէ երկու կտորները և
 կը կարդայ դժուարութեամբ «Գնացքը կոր-
 սուած: Պիտի հասնիմ երկրորդով ժամ 12:
 Ոստիկանապետ ասպետ Սուրէն»: Ո՛հ, ի՞նչ
 աղէկ, ուրե՛մն ոստիկանապետ չկայ: Բէ՛հ,
 ասիկա նշանակութիւն չունի: Անգամ մը
 որ ձերբակալուիմ, մէկը պիտի մտածէ ան-
 շուշտ իմ օրապահիկս տալու ինծի: Ո՛հ ...
 (կը բացուի աջակողմեան դռուը):

ՏԵՍԻՆ, ՀԻՆԳԵՐՈՐԳ

ԳԻՄԱՔՍԵԱՆ և ԳԱՊԱՐ

- Գասպար. — Բարի լոյս: Պ. Ոստիկանապետն էք ...
- Դիմարս. — (առանց ուզելու բերնէն կը փախցրնէ անունը զոր կարգացեր էր ձեռագրին մէջ) Ասպետ Սուրէն ... ես եմ ...
- Գասպար. — (ցատքերով) Ա՛հ Հրամանադ ես ... Պ. Ոստիկանապետն էք, ներեցէք, ներեցէք ... (Գասպարէն. Զարեհէն և Նուիրակէն դուրս ոչ ոք կրնայ գիտնալ ինոր Սոսիկանապետին անունը. Սուտի բնական է, որ անոր շքեղ վերնագրեստն ալ բոլորով Գասպար գիւրքը աւսպետ Սուրէն կարծէ):
- Դիմարս. — Ոչ ... կը տեսնես, ես ... հասկընանք զիրար ...
- Գասպար. — (ընդհատելով զայն) Պ. Նուիրակը դուրս ելած է վիրաւորեալի մը համար... ստիպողական կոչ մը ...
- Դիմարս. — Շատ լաւ ... բայց զիրար հասկընանք, ես, կը տեսնես ...
- Գասպար. — (ինչպէս վերեւ) Պիտի հեռագրէ, պիտի հեռագրէ:
- Դիմարս. — Այո՞ աւելի լաւ. բայց ես կուզամ յանձն...
- Գասպար. — (ինչպէս վերեւ) Այո՛, մեր Ոստիկանապետին տեղը բռնելու համար, որ երկար ժամանակէ մը ի վեր հիւանդ է ... կը հաճի՞ք հանել վերնագրեստնիդ:
- Դիմարս. — (շուտով) Ո՛չ... ո՛չ... վրաս կը պահեմ, վրաս կը պահեմ ... (մեկուսի) Բայց ի՞նչ ձիւն պիտի գայ զլիսուս հիմա: Ուրեմն

ես ... (դադար):

Գասպար. — Հրամմեցէ՛ք, հրամմեցէ՛ք:

Դիմարս. — (արիարար) Մէկ խօսքով ես չեմ...

(նեռախօսիկ զանգակը կը ննչէ):

Էջրկոչքն ալ. — (իրարոշ երես կը նայիկ լուս)

Գասպար. — (չսոչքիւնը կը խզէ) Հեռախօսին կը կանչեն ... Պ. Ոստիկանապետ ...

Դիմարս. — (պահ մը շուրջը կը դիտէ) ...

Ա՛հ ... այո՛ ... հեռախօսին կը կանչեն ...
ճիշտ է, յայտնի է ...

(նոր ննչիւն մը նեռախօսի զանգակիկ)

Գասպար. — Գուցէ Պ. Նուիրակն ըլլայ:

Դիմարս. — (որ բնաւ տեղեկ չի շարժիր)
Հաւանական է:

Գասպար. — Էս երթամ ...

Դիմարս. — (չուտ մը և գոհոչքեաւը) Այո՛,
զնա՛ ... երթաս բարով:

Գասպար. — Ո՛չ ... հեռախօսին մօտ ...

Դիմարս. — Այն ատեն գիշեր բարի:

Գասպար. (որ գացած կ'ըլլայ նեռախօսիկ
մօտ) Պատրաստ ... Այո՛...Գասպար ... այս
վայրկենիս ...

Դիմարս. — (մեկոչսի) (Անօթութիւն, զիս քեզի
կը յանձնեմ):

Գասպար. — (իկնպէս վերեւ) ... անմիջապէս
(Դիմարսեանիկ): Պ. Ասպետ ... Պ. Ոստիկա-
նապետը կը փափարի ձեզ հետ խօսիլ:

Դիմարս. — (զարմացած) Բայց ո՞ր Ոստիկա-
նապետը, քանի՞ Ոստիկանապետ ունիք դուք...

Գասպար. — (միշտ նեռախօսիկ մօտ և ընկա-
լուչը նեռքը) Ներեցէք...մերինը, ասպետ Գուր-
գէնով ...

Դիմարս. — (չուտով) Մոռցած էի ... այնչափ
բան ունիմ գլխուս մէջ որ, Գուրգէնով
Գուրգէնով ... հիմա կը յիշեմ ... (փոքր
դադար մը):

Գասպար. — Ձեզի կը սպասէ ...

Գիւմարս. — Ես ալ իրեն կը սպասեմ, թող
գայ եթէ բան մը կ'ուզէ:

Գասպար. — Բայց, ներեցէ՛ք, նա հեռախօսին
քովն է ... (մեկուշի) ի՞նչ դեւ ունի սա:

Գիւմարս. — Այնպէ՞ս է:

Գասպար. — Հրամմեցէք, առէք եղջիւրակը...

Գիւմարս. — Այո՛ (ականչիկ կը դնէ կղզիւրակ-
կը) ... մի՛շտ պատրաստ ... այո՛ ... պա-
տրաստ, պատրաստ ... այո՛ ... այո՛ ...
այնպէս, այո՛ ... ո՛չ ... այո՛, այո՛ ... ո՛չ,
ոչ, ոչ ... այոո՛ո, այոոո՛ո ... բայց ահա...
այո՛, ո՛չ ... շատ լաւ, շատ լաւ ... այո,
այո՛ ... այո՛, այո՛ ... Ահա եղաւ (կը քողոշ
ձեռքէն կղզիւրակը որ կը ձօձի և Գասպար
կը կախէ գայն ձեռախօսիկն կենեկէ):

Գասպար. — Ներեցէ՛ք, ի՞նչպէս է վիճակը:

Գիւմարս. Բա՛բէ, ամենալաւ:

Գասպար. — Այն ատեն փութով պիտի մտնէ
իր պաշտօնին մէջ

Գիւմարս. — Բայց ... ի՞նչ, միթէ անոր մէջ
մտած չեմ դեւ:

Գասպար. — Ոչ, ասպետ Գուրգէնով կ'ըսէի...

Գիւմարս. — Բոլորովին վերջացած մարդ մ'է:

Գասպար. — Վերջացա՞ծ:

Գիւմարս. — Բոլորովին վերջացած: Ուրեմն
ասիկա՞ է իմ գրասեղանս:

Գասպար. — Հրամմեր էք, տէր իմ, բայց
թող առէք դիտել տալու ձեզ որ վերնագ-
գետանիդ չհանելով պաղ պիտի աննէք:

Գիւմարս. — Ո՛չ, բնաւ, գայն յօժարութեամբ
վրաս կը պահեմ, կը մտիմ: (կարեւորագոյն
գործ մը ստանձնելէ ևտքը, կը նստի կա-
տակերգակ յրջոչքեալք մը: Տափակ շար-
ժուսներ, ծանրոչքիւն մը խօսկոչն մեզ,
բասիրը իրարմէ անչատկոյմ, խիստ շատ
գործերով քեանաւորոշած մարդու մը պես)
Ուրեմն ... քանի՞ է ժամը:

Գասպար. — Տաօը զարկած է:

Գիւմարս. — (դիտելով գրասենեակին պատերը)
Ճօճանակաւոր ժամացոյց մը չկա՞յ գրասենե-
կին մէջ:

Գասպար. — Ո՛չ, տէր իմ:

Գիւմարս. — Իսկ դուք ձեր գրպանին մէջ ժա-
մացոյց ունի՞ք:

Գասպար. — Այո, տէր Ռտիկանապետ:

Գիւմարս. — Տո՛ւէք ինձի զայն:

Գասպար. — Ահաւասիկ հրամմեցէք:

Գիւմարս. — Շնորհակալ եմ: (գրասեղանին
փրայ կը դնէ զայն և ինքն իրեն կ'ըսէ) Գեռ
մէկ ու կէս ժամ ատեն կայ, շատ լաւ:

Գասպար. — Հրաման մ'ունիք, տէր իմ:

Գիւմարս. — (յուշ, յետոյ կգտնի խօսելով
նետը) Լսէ՛: Այնքան շտապով մեկնեցայ որ
ժամանակ չեղաւ նախաճաշ անգամ ընելու:
Գնա՛ ստորեւ գտնուած ճաշարանը և ինձի
դրկէ ծառան:

Գասպար. — Անմիջապէս (մեկնելու փրայ
կ'ըլլայ):

Գիւմարս. — Սպասէ՛:


Գասպար. — Հրամմեցէ՛ք:

Գիւմարս. — (աջ կողմի ձեռքին բրամատը և
ցուցամատը կը բնցնելով ձեռտին տակ, և
յօնքերը կնձռելով՝ ծանր խնդիր մը լուծելու
փրայ կողոյ մարդու մը նման, կ'ըսէ, կարճ
լուռքնէ մը վերջը, լրջուրեամբ): Ո՛չ ...
Գնա՛ ...

ՏԵՍԻՒՆ ԳԵՑԵՐՈՐԴ

ԴԻՄԱՔՍԵԱՆ միայն, յետոյ ԳԱՍՊԱՐ և ԾԱՌԱՆ

Գիւմարս. — (միևնակ մնացած՝ զօրաշոր ծիծաղ
մը կը փրցնէ): Ա՛հ, ա՛հ, ա՛հ... Ասիկա իրաւ-
պեղծ Ոստի. 2



ցընէ կատակերգութիւն մ'է ... Ի՛րք հան-
դերձեալ աշխարհին ... Անձնատուր ըլլալու
կու գամ հոս՝ և զիս Ոստիկանապետի տեղ
կ'ընդունին: Արանչելի՛ բան: Առջեւս մէկ ու
կէս ժամ ունիմ: Շքեղ ճաշ մը կ'ընեմ և
յետոյ կծիկը կը դնեմ, և եթէ կրնան թող մէկ
մ'ալ զիս տեսնեն: Միւս կողմանէ ... միթէ
յանցանքն ի՛մս է: Չանանք որ մազը չծակուի
և ամէն բանէ վեր երեսօնագութիւն:

Գառպար. — Կերելի՞ է:

Գիւմարս. — Առջ եկուր:

Գառպար. — Ահաւասիկ ծառան:

Ծառայ. — Ի՞նչ կը հրամայէ Պ. Ասպետը:

Գիւմարս. — (ժողրածու կարևորութեամբ մը)
Ի՞նչ ունիս պատրաստ:

Ծառայ. — Այն ամէն բան որ կը փափաքի
Պ. Ասպետը:

Գիւմարս. — (ինչպէս վերեւ) Օրինակի համար:

Ծառայ. — (մէկ շունչով) Կը փափաքի՞ք այժու
միտ և ուտն: Հունգարական եզնակա՞նջ:
Մարտիլիական կողի՞կ: Ընդատուն խեղդուք-
նե՞ր: Կը փափաքի՞ք բրինձէ կարկանդակ մը
բոպէական: Կանկարի ձուազեղ ... սնկեղէն
... կը փափաքի՞ք ...

Գիւմարս. — Սպասէ՛ վայրկեան մը:

Ծառայ. — Գեղջական ձուազեղ:

Գիւմարս. — (ուժով) Կեցի՛ր ... (մեծ մտած-
մունքով) Տապկած հաւ մը, առատ հաց և
լիտր մը գինի:

Ծառայ. — Անմինջապէս. Պ. Ասպետ: (կ'երլէ):

Գիւմարս. — Մեր գործին դառնանք ... ձեր-
բակալութիւններ այս առաւօտ:

Գառպար. — Ո՛չ, տէր իմ:

Գիւմարս. — (ժիծաղկի յրջութեամբ) Շատ
զէջ ... դուք կը թողուք որ ձեր ձեռքէն
փախչին ... յանցաւորները նոյն իսկ երբ
անոնք անձնատուր ըլլալու համար կու գան
հոս:

Գ.ասպար. — Կարելի՞ է այդ բանը:

Գ.խմարս. — (բռնցի մը զարնելով սեղանին վրայ) Այդպէս է: Ոչ մէկը ինծմէ աւելի լաւ կրնայ գիտնալ զայն ... (դադար) ինծի յոսեգոյն տեղեկութիւններ տուին այս պաշտօնարանին ընթացքին վրայ՝ և հարկ պիտի ըլլայ, ուտի, մաքրագործում մ'ընել:

Գ.ասպար. — Բայց ես ...

Գ.խմարս. — Բայց դուք, այո՛ դուք, ձիշտ դուք ... Ի՞նչ հանդերձեալ աշխարհին ... դադար, յետոյ կարդարով արձանագրութեանց տետրակի մը վերնագիրը որ գրասեղանին վրայ կը գտնուի) «Տատիկանութեան ծանօթութիւններ» (կը բանայ զայն, մէջէն կ'առնէ քերք մը և կը կարդայ) «Պարեզին Գիմարսեան, (բա՛բէ) անգործ վտանգաւոր (և հոս նկարագիրները դերասանին ազատութեան բողոքած է որ պիտի ներկայացնէ Գիմարսեանը) (շարունակելով) «մեկնած է այդ քաղաքը: Հսկեցէք զինքը»:

Գ.ասպար. — (ըռտով) Երէկ իբիկուն ձերբակալուեցաւ Պ. Ասպետ ...

Գ.խմարս. — Ձերբակալուած ... կեցցէ՛ք, կեցցէ՛ք ... լաւ հոտառութիւն ունիք. և ի՞նչ ըրած է:

Գ.ասպար. — Չեմ գիտեր. մենք Նուիրակին տուած հրամանները կը գործադրենք միայն:

Գ.խմարս. — Ի՞նչ. գէշ չէ (նորէն կարդարով ծանօթութիւնները (Պարեզին Գիմարսեան անգործ վտանգաւոր ...: Եւ ստուգիւ ձերբակալեցի՞ք զինքը:

Գ.ասպար. — Այո՛, տէր իմ, ես ձերբակալեցի զայն ...

Գ.խմարս. — Գու՞ ... դու՞ ... քու այդ ցցուած պիտերո՞վդ: (խստացնելով ձայնը) վա՛ր ա՛ն այդ պիտերդ ...

Գ.ասպար. Բայց ...

Գ.խմարս. — Վա՛ր ա՛ն, կ'ըտեմ, այդ պիտերդ ...

- Գասպար. — (կը գործադրէ):
 Դիմարս. — Ահ, գայն ձերբակալեցիր դու,
 կեցցես, քեզի պարզեւ մը պիտի բերել տամ
 ... քո սրամտութիւնդ արժանի է ստուգիւ
 վարձատրութեան մը:
- Գասպար. — Շնորհակալ եմ, երախտապարտ...
 Դիմարս. — (ձայնը փոխելով) Բայց առ ժամս
 թողուցէ՞ք զինքը:
- Գասպար. — Բայց Պ. Ոստիկանապետ ...
 Դիմարս. — (ուժով) Կրկնութիւն չեմ ուզեր:
 Դիմարսեանը ես լաւ կը ճանչնամ ... վաղե-
 մի ծանօթութիւն մ'ունիմ անոր հետ և չեմ
 սխալիր ըսելով թէ զինքը կայարանին մէջ
 տեսայ մինչ խաղաղ կը կենար սիկար մը
 ծխելով:
- Գասպար. — Անկարելի է ...
 Դիմարս. — Ի՞նչպէս թէ անկարելի: Ինծի՞
 կ'ըսես որ անկարելի է ... սիրելիս, ճշմա-
 րիտ է ինչպէս ...
- Գասպար. — Ի՞նչպէս:
 Դիմարս. — Ինչպէս թէ զինքը աչքիդ առջեւ
 ունենայիր ... բա՛ւ է դեռ ... չեմ ճաշեր:

ՏԵՍԻՒԼ ԵՕԹԵՐՈՐԴ

ԾԱՌԱՆ և ՎԵՐԻՆԵ

- Ծառայ. — (դրան վրայ՝ կրք Դիմարսեան
 կ'ըսէ. չեմ ճաշեր): Ետ տանի՞մ:
 Դիմարս. — Ի՞նչ բան:
 Ծառայ. — Ճաշը:
 Դիմարս. — Ինչո՞ւ համար:
 Ծառայ. — Ըսիր թէ ... չեմ ճաշեր ...
 Դիմարս. — Անմիտ, հոս դի՛ր: (Ժառան կը
 կատարէ): Իսկ դու Գասպար, գնա՛, ազատ

- Թող այն խեղճ մարդը որ ձերբակալած էք :
 Գառպար. — Շատ լաւ (կը մեկնի) :
 Մասնայ. — Ուրիշ բան կ'ուզէ՞ք Պ. Ոստիկա-
 նապետ ...
 Գիմարս. — Ոչինչ :
 Մասնայ. — Բարի ախորժակ :
 Գիմարս. — (կը նայի ականոր հ. յետոյ) Շնոր-
 հակալ եմ :

ՏԵՍԻՒԼ ՈՒԹԵՐՈՐԳ

ԳՐԹԱՔՍԵԱՆ ՄԻՈՅԻՆ, յետոյ ՀԵՌԱԳՐԻ ՊԱՇՏՕՆԵԱՅՆ

- Գիմարս. — Ասպետ Գարեգին Գիմարսեան,
 Ոստիկանապետ Հանրային Ազատութեան :
 Է՛հ, գէշ չէ : Պաշտօն մ'է, որուն շիտակն
 ըսելով, երբեք չէի սպասեր : Հիմա մեզի
 դառնանք. վերջապէս պիտի կարենամ դա-
 դրեցնել տալ իմ փորիս նեղացուցիչ կարկա-
 ջուժը : Ի՛նչ գեղեցիկ հաւ : Անոր լաւագոյն
 պատառը ընտրենք : (մինչ կարելու վրայ
 կ'ըլլայ, ներս կը մտնէ ձեռախօսի պաշտօն-
 եայն) :
 Պաշտ. Հեռ. — Ներելի՞ է :
 Գիմարս. — (անձեռոցով ձաշը կը ծածկէ) :
 Առաջ եկուր :
 Պաշտ. Հեռ. — Կրնա՞ք տալ ինծի ընկալագիրը :
 Գիմարս. — Ահաւասիկ (կու տայ գայն ականոր) :
 Պաշտ. Հեռ. — (կը սպասէ ընդունելու ստոր-
 եայ ձեռաձիրը) :
 Գիմարս. — Ի՛նչ կ'ուզես ...
 Պաշտ. Հեռ. — Ինչպէս ... կը տեսնէք ...
 Գիմարս. — Հասկցայ, ձեռաձիրը՞ :
 Պաշտ. Հեռ. — Այո՛, ստուգիւ ...

Գիմարս. — (աչ ահանչը քերելով, և նման պչրանքների ընկելով) Մտուզիւ ... բայց, բայց ուրիշ անգամ առնելիքդ ըլլայ, մանրուք չունիմ:

Պաշտ. Հեռ. — Մնաք բարով (կը մեկնի):

Գիմարս. — (կարեւորութիւն տալով) Յսեաւ, թիւն:

ՏԵՍԻՒԼ ԻՆՆԵՐՈՐԴ

ԳԻՄԱՐՍԵԱՆ, յետոյ պ. ԳԱԻԹ

Գիմարս. — (միևսկ մնալով կը բանայ ան-
ձեռոցը և ձեռքը կ'առնէ պատառաքաղը ու
դանակը իբրեւ թէ երկուս սոտրեր ըլլային)
Կարգը եկաւ: Զարդենք ասիկա ...

Գաշիր. — Ներելի՞ է:

Գիմարս. — Կրո՞ղը տանի ձանձրացուցիչները:
(կը ծածկէ պնակը) Ներս մտի՛ր:

Գաշիր. — Պ. Ոստիկանապետի՞ն հետ է որ կը
խօսիմ:

Գիմարս. — Այո՛ ... ասպետ ... (ծանրու-
րեամբ): Նստէ՛ եւ խնդիրքդ պարզէ, բայց
շտապով, խնդրեմ, վասն զի ուրիշ գործ
ունիմ:

Գաշիր. — Կարճ պիտի խօսիմ: Վերնազգեստս
զողցուեցաւ:

Գիմարս. — (ոստիւն մ'ընկելով) Վերնազգեստդ
... բա՛բէ, լսուած բան չէ, ի՞նչպէս, ի՞նչ
կերպով:

Գաշիր. — Կեղրոնական սրճարանին մէջ:
Զայն կախած էի սրճարանին առաջին սրա-
հին մէջ՝ կեռէ մը, եւ երբ գնացի գայն առ-
նելու, անոր տեղը գտայ կեղտոտ և դեղնած

ցնցտաի մը: Տեսակ մը վերարկու, այնքան մաշած որ կրնայ շփոթուիլ թանգարաններուն մէջ սահուած դրօշակի մը հետ, որ խիստ շատ պատերազմներու մասնակցած ըլլար:

Դիմարս. — (վարպետուհեամբ մը ծածկելով հագած զգեստը բաց օրագրի մը միջոցաւ): Ուրեմն դուք պիտի ուզէք ... որ ձերբակալուի զայն վերցնող տանողը ...

Դաշիր. — Արդարեւ այս գողութիւնն իմաց տալը, ըստ ինքեան տեղի պիտի չունենար ...

Դիմարս. — (չուտ մը) Այդ, այժմ ... շատ աւելի լաւ եղած պիտի ըլլար:

Դաշիր. — (չարուհեակելով) ... եթէ պարզապէս գողութիւն մ'ըլլար խնդիրը, բայց անոր ներքին գրպաններուն մէկին մէջ բաւական կարեւորութիւն ունեցող թղթեր կային, որոնց կորուստը ինծի ծանր վնաս պիտի հասցնէ:

Դիմարս. — Ուրեմն ... դուք ... կ'ուզէք ... ահաւասիկ, իրարու միտք լաւ հասկնանք. ինչ գոյն ունի այդ վերնագգեստը:

Դաշիր. — Սեւ, աստրաքանի օձիքով ... կեցիք. ճիշտ այնպէս ինչ որ դուք, Պ. Աստղեան ձեր վրայ կը կրէք:

Դիմարս. — (բռնի ծիծաղով) Նայէ՛ ... նայէ՛ ... զուգադիպութիւն: Բա՛հ: Իրք հանդերձեալ աշխարհին:

Դաշիր. — Ստուգիւ իրեր ...

Դիմարս. — ... հանդերձեալ աշխարհին, որոնք կու գան պատահելու այս աշխարհիս վրայ: Ուտաի գրի առնենք ... (կը գրէ): Սեւ վերնագգեստ ... աստրաքանի՛ օձիքով... յատուկ նշաններ:

Դաշիր. — Աջ թեւին վրայ խոշոր սուրճի բիծ մը:

Դիմարս. — (ձիւ մը արձակելով, աջ քեշը առկախ կը րոպուզ դէպի վար գրասեղանին)

տակ որպէս զի ծածկուի): Ա՛յ, Ա՛յ:

Դաշիր. — (վախցած) Ի՞նչ պատահեցաւ:

Դիմարս. — Ոչինչ, ոչինչ, անիծեալ ցաւ մը որ մերթ ընդ մերթ աջ թեւիս վրայ կ'ունենամ, մասնաւորապէս երբ երկար ատեն կը զրեմ:

Դաշիր. — Յօգայի՞ն ցաւեր:

Դիմարս. — Յօգային ցաւեր, զոնէ այնպէս կը կարծեմ: Ահա հիմա, ժամանակ մը պիտի կրեմ զայն. բացարձակապէս չեմ կրնար շարժել թեւս:

Դաշիր. — Թող որ տեսնեմ, թող որ տեսնեմ, Պ. Ասպետ: Ես բժիշկ եմ և դեռ աւելին՝ մասնագէտ եմ այդ տեսակ ցաւերու, եւ զուցէ կարենամ օգտակար ըլլալ ձեզի:

Դիմարս. — (հեռացնելով զայն) Ո՛չ, ո՛չ, մի՛ դաշիր ինծի, մի՛ դաշիր կ'աղաչեմ: Քիչ մը վերջը, քիչ մը վերջը, երբ դառնալու ըլլաս վերնազգեստին խնդրոյն համար, թող պիտի տամ որ քննութիւն մ'ընես:

Դաշիր. — Եւ մինչեւ այն ժամանակ պիտի տանջուիս:

Դիմարս. — Հոգ չէ, հոգ չէ. արդէն վարժուած եմ այս նստաներուն, անոնցմով չզբաղինք, մեր գործին դառնանք: Ուրեմն մասնաւոր նշաններ խոշոր սուրճի բիծ մը աջ թեւին վրայ ...

Դաշիր. — Ամենաճիշտ:

Դիմարս. — (դիտելով ուշքին տակէն աչքիւնը): Այո՛ կը տեսնուի ... խիտ լաւ:

Դաշիր. — Է՞հ:

Դիմարս. — (նանդարտելով) Այո՛ ... կը տեսնուի ... ամենապայծառ որ գողը հոգ չըբաւ այն բիծը և թոցուց վերնազգեստը, հոն թողելով փոխարէն իր վերարկուն:

Դաշիր. — Ատիկա պայծա՛ն, է:

Դիմարս. — Ի՞նչպէս: Հիմա ա՛լ սեւ չէ՞:

Դաշիր. — Ո՛չ, կ'ըսէի թէ ...

- Գիւմարս. — Կը հասկնամ ... իրք հանդերձեալ աշխարհի:
- Դաւիթ. — (որ դիտած պիտի ըլլայ ուշադրութեամբ Գիւմարսենի հագած վերնազգեստը) Բայց որչափ կը դիտեմ ձեր հագած վերնազգեստը, ներեցէ՛ք սակայն, այնչափ աւելի իմինիս նմանութիւնը կը տեսնեմ անոր վրայ...
- Գիւմարս. — (ուժով իրրեւ նախատուած): Է՛հ...
- Դաւիթ. — Տարօրինակ պատահմունք . . . Եթէ Պ. Ասպետ դուք չըլլայիք զայն հագնողը, ես վայրկեան մ'ալ պիտի չվարանէի ըսելու, այդ վերնազգեստը իմս է . . .
- Գիւմարս. — Բայց ի՞մ վրաս գտնուելովը ...
- Դաւիթ. — Կը յուսամ որ Հրամանքդ պիտի չուզենաս փոքր ինչ տարակոյս ունենալ՝ որ ես ա՛յսպէս մտածեմ, վասն զի անհեղեղ պիտի ըլլար այն:
- Գիւմարս. — Իրաւցնէ անհեղե՛ղ: Հանդիպումներ ստուգիւ որ կը պատահին այս աշխարհիս վրայ և մեզի աղաղակել կու տան. իրք հանդերձեալ... Ուրեմն իրարու միտքը հասկնանք, դուք կրնաք երթալ: Գարձէ՛ք քանի մը ժամէն ետքը: Կ'երաշխատորեմ ձեր վերնազգեստին յանձնումը իրեն յատուկ բիծովը ...
- Դաւիթ. — Ստուգի՛ւ.
- Գիւմարս. — Մի՛ տարակուսիր բնաւ: Բաւական է որ ես փոքր շարժում մ'ընեմ ձեռքս զգեստիդ վրայ դնելու համար:
- Դաւիթ. — (չուտով) Ինչպիսի՛ շարժում:
- Գիւմարս. — (ըրջոյրեալը) Այս ոստիկանութեան գաղտնիք մ'է:
- Դաւիթ. — Հասկցայ: Առ ժամս հաճեցէք ներել ինձ: Պիտի վերադառնամ, և զիս ձեզի կը յանձնեմ, Պ. Ոստիկանապետ (աչր կ'երկնցնէ բարեւերու համար):
- Գիւմարս. — (մերեկարար կ'երկարէ աչր, բայց յետոյ, յիշելով բիծը, ետ կը քաշէ զայն

- չուտով սրպէս գի չտեսնուի) Ո՛հ, բիծը:
 Գաշիք. — Է՛հ ...
 Գիւմարս. — (նանդարտեղով) Այո՛, բիծը, պի-
 տի տեսնես, սիրելի պարոն, շատ դիւրութիւն
 պիտի տայ մեզի գողը գանելու մէջ:
 Գաշիք. — Յուսանք անոր: Կրկին անգամ
 (կ'երկ դուրս):
 Գիւմարս. — Յտեսութիւն:

ՏԵՍԻՆ, ՏԱՍՆԵՐՈՐԳ

ԳԻՄԱՐՍԵԱՆ միայն, յետոյ ԳԻՍԱԿ

- Գիւմարս. — Բայց տե՛ս մէկ մը թէ ինչ գալիք
 կայ զլիսուս: Այս անիծեալ բիծին պատճա-
 ռաւ քիչ մնաց կը կորսնցնէի ասպետութիւնը:
 Զննենք քիչ մը սա խիտ կարեւոր թղթերը,
 գիտնալու համար գոնէ՛ թէ ինչով բեռնաւո-
 րուած եմ, (կը նսնկ գրպանէն խոշոր քղրի
 ծրար մը, կարդալով) «Բերանի առողջապա-
 հութիւնը ... լաւ մարտելու համար» ասիկա
 ինծի չի վերաբերիր, ես շատ լաւ մարտեր
 եմ և երէկ իրիկունէ ի վեր: «Մէկ ճաշէ
 ցմիւսն: Պէտք չէ երկար ժամանակ հանգիստ
 թողուլ ստամոքսը, հարկ է միշտ գործել
 տալ անոր» և հետեւաբար գործի մէջ դնենք
 զայն: Կրողը տանի դրութիւնները: Գործեր
 նախ և առաջ հաւեր պէտք են մեզի: Մեր
 գործին նայինք, շարդենք զայն: (կը պատրաս-
 տուի չարդելու: Թորոց ծրարը դրած կ'ըլլայ
 գրասեղանին վրայ):
 Գիսակ. — Ներելի՞ է:
 Գիւմարս. — Գարձեա՛լ (կը ծածկե պնակը)
 Առա՛ջ եկուր:

Գիտակ. Ներեցէք, Պ. Նուիրակ Գեղամը հոս չէ՞:

Գիմարս. — Հոս չէ, դուրս ելաւ ... եւ դուք ինչ կը փափաքիք:

Գիտակ. — Ես Գիտակն եմ, որո՞ւ հետ պատիւ ունիմ խօսելու:

Գիմարս. — Ոտակականապետին հետ ասպետ ... ասպետ:

Գիտակ. — ... իմ յարգանքներս ուղիւսըն:

Գիմարս. — Ո՛չ, Սուրէն. ասպետ Սուրէն: Ուրե՞մն:

Գիտակ. — Ահաւասիկ ...

(ձեռախօսին գանգակը կը ձնչի)

Գիմարս. — Վայրկեան մը (ձեռախօսին մօտ կ'երթայ) Պատրաստ. պատրաստ ... Գեղամ ... Շատ լաւ ... այո՛, Ոտակականապետին հետ ... խիստ լաւ, շնորհակալութիւն: Եւ դուք ... բարի ... ձերբակալուած ... խուզարկութիւն ... շատ աղէկ ... դրամանենգ ... լաւ, լաւ ... է՞ն. Ռուբէնը ... ո՞վ է Ռուբէնը ... ոչ, չտեսայ ... զնա՛, զնա ... մանաւանդ թէ կէսօրէն վերջը դարձիր: (ուշով) Ես անոր պատճառը գիտեմ և կը բաւէ: Մնաք բարով (առ գիտակն) ուրեմն ...

Գիտակ. — Ահաւասիկ ... Չորս հինգ օր կայ որ զո՞ն եղայ յանդուզն գողութեան մը: Վաճառականական Գրամատունէն դառնալով, ուր ստացած էի փոքրիկ գումար մը շուրջ 200 լիրայի, ուզեցի ամերիկեան ըմպելիք մը խմել: Պարոն մը ինծի կը մօտենայ և հետս խօսքի կը բռնուի և ինծի ծուխի գլանիկ մը կը հրամայէ:

Գիմարս. — Սովորական բան:

Գիտակ. — Գլանիկը թմրեցուցիչով դեղած էր: Երբոր սրճարանին տէրը, զիս արթնցուց՝ սրճարանը փակելու պահուն, բարեկամն անշքեւոյթ եղած էր և երբոր ուզեցի վճարել ...

Գիւմարս. — Գրամապանակը չգտար ա՛յլեւս :
Եղածը բնական է :

Գիսակ. — Ինչպէ՛ս, բնական է :

Գիւմարս. — Այո՛... կ'ուզէի ըսել պայծառ է...

Գիսակ. — Այս առաւօտ Պ. Նուիրակ Գեղամի մէկ այցեատմօք որուն՝ այն օրէն ի վեր եղած գողութիւնը ծանուցած էի, ինծի կ'իմացնէր որ շուտով իր պաշտօնատունը գամ, բաղդատութեան մը համար ձերբակալուածի մը հետ :

Գիւմարս. — Պ. Գեղամ յայտնապէս խաբուած է : Հոս ձերբակալուածներ չկան : Եւ եթէ ըլլային ալ, պիտի չներէի որ անոնց մասին բաղդատութիւններ ըլլուին : Բաղդատութիւններն միշտ ատելի՛ են :

Գիսակ. — Բայց Հրամանքդ, Պ. Ասպետ ...

Գիւմարս. — Բայց ես քեզի կ'ըսեմ որ անցնիս երթաս եւ ա՛լ աւելի ձանձրութիւն չպատճառես ինծի, հոս սեղանին վրայ ընելիք գործ մ'ունիմ որ այլ եւս կարելի չէ աւելի սպասցընելը :

Գիսակ. — Բայց իմ գողս միթէ նուա՞ց կարելոր է :

Գիւմարս. — Յայտնի է, եթէ չվերջացնեմ ես ընելիք գործս, փորս պիտի ճեղքի :

Գիսակ. — Է՛հ :

Գիւմարս. — (ձանդարտելով) Այո՛... ըսել կ'ուզեմ իմ կեանքս : (ուժով գրեթե պռապով) Եւ յետոյ ըստ արդարութեան, ես կը գտնեմ որ ստուգիւ դու իրաւունք չունիս գանգատելու : Եւ ի՞նչ բանի վրայ ուրեմն կը բողոքես : Եւ իրք հանդերձեալ աշխարհին : Ո՛հ, եթէ քեզմէ հազարաւոր լիրաներ գողցած ըլլային ... կը հասկնամ ... Բայց ո՛չ : Դու քանի մը տասնեակ լիրաներէ թեթեցեր ես ... Ուրեմըն, ինծի նայէ՛, ես գողութիւն ըսուելու իր մը չեմ տեսներ եղածին մէջ : Դու պէտք չէիր ընդունիլ գլանիկը . . . այս տեղ

պարզօրէն փոխանակութիւն մը տեղի ունեցած է: Գու ծխեցիր, ուրե՛մն: Թէպէտեւ զո՛ն չես մնացեր: (խիստ ուժով) Բայց դու անմիտ ես ... եւ ինծի ժամանակ կորսնցնել կուտաս: Չեմ գիտեր ո՛վ պիտի զսպէ զիս, զքեզ բռնել նետել տալու հօն՝ ուր պիտի ուզէիր որ ուրիշնե՛րը նետուին: Թէ տակաւին հո՛ս կենամ ե քու յիմարութիւննե՛րդ լսեմ: Օ՛ն ուրե՛մն: Կորսուէ՛ ասկից: Շու՛տ:

Գիսակ. — (վախցած) Հազար ներողութիւն կը խնդրեմ ձեզմէ, բայց ...

Գիմարս. — Ի՛նչպէս: Գեռ մեկնած չե՞ս: Կորսուէ՛:

Գիսակ. — (շփոթած, գրեթէ դռար դժուարութեամբ գտնելով դռարս կ'ելլէ) Կ'երթամ, կ'երթամ:

ՏԵՍԻԼ ՏԱՍԵՄԷԿԵՐՈՐԴ

ԳՐԱՐԱՐՍԵԱՆ միայն

յետոյ ԾԱՌԱՆ, ԳԱՍՊԱՐ և ՍԻՍԱԿ

Գիմարս. — Մեծ տաղանդ մը չուզեր, յետոյ, Հանրային Ապահովութեան Ոստիկանապետ ըլլալու համար: Բայց ժամանակը կ'անցնի եւ իմ բերանս դեռ չորցած է: Չարդենք ... ո՛չ, լաւագոյն պիտի ըլլայ որ ուրիշ սենեակի մը մէջ քաշուիմ: Գոնէ հանգստօրէն պիտի կարենամ ուտել: (կը միացնէ անձեռոցիկն չորս ծայրերը՝ ծրար մը ձեւացնելով):

Ծառայ. — Ահաւասիկ եմ Պ. Ասպետ (կարծելով թէ Գիմարսեան կ'ուզէր վար տանիլ պնակները, կ'ուզէ ձեռքէն տանել ծրարը):

- Նեղութիւն մի՛ կրէք, ես կը տանիմ:
- Գիւմարս. — Ո՛չ, ո՛չ, թո՛ղ, թո՛ղ կենայ ...
- Ծառայ. — Բնաւ պիտի չթողում որ Ասպետ մը ...
- Գիւմարս. — (ուժով և նեղուշով) Թո՛ղ, կ'ըսեմ քեզի, դեռ չեմ ճաշեր ...
- Ծառայ. — (եւ քաշուկով, մաճաղուշով) Նե-
րեցէք, ես կը կարծէի ... (կ'երկ):
- Գիւմարս. — Այս դէպքը կը պահսէր գլխուս ... երթանք: (երբարու վրայ կ'ըլլայ):
- Գասպար. — (սչ կողմէն) Ձերբակալուած Գի-
մարսեանը, Պ. Ասպետ ձեր հրամանին կ'ըս-
պատէ ...
- Գիւմարս. — (մեկուշի) Իրաւցնէ ուտելու բախ-
տը կը դիմակայի այսօր Գիմարսեանին (ու-
ժով): Թող ներս գայ: (Հետաքրքիր եմ տես-
նելու թէ իրաւցնէ ինծի հետ նմանութիւն
մ'ունի այդ մարդը ...) (պնակը նորէն գրա-
սեղանին վրայ կը դնէ):
- Սիւսի. — (կը դիտէ պա՛մ մը գ'Գիւմարսեան,
յետոյ) Ծօ՛, ծօ՛, նայէ՛, նայէ՛ իմ սիրելի
Գիմ ... (մտակցած կ'ըլլայ սնոր ձեռքը սեղ-
մելու համար):
- Գիւմարս. — (չուտով): (Ղե՛, ապո՛ւշ) Ասպետ,
ամենամեծ ասպետ ... Ուր կը զանեմ գրեզ
... (օգնէ ինծի):
- Սիւսի. — (կարեւորուշիւն տալով սնձիկ
և ծաղրածու յրչուքեամբ մը) Ի՛նչ ընես,
կեանքի պատահարնե՛ր, բայց ի՛նչպէ՛ս հոս ...
- Գասպար. — Պարտնը վրան առած է ...
- Գիւմարս. — (չուտով) Ի՛նչ առած եմ վրաս ...
- Գասպար. — Ոտիկանապետութեան ծանր
պաշտօնը:
- Գիւմարս. — (սիրտ առած) Ա՛հ:
- Սիւսի. — Ի՛նչպէ՛ս, ի՛նչպէ՛ս, Ոտիկանապետ:
- Գիւմարս. — Այո՛, Ոտիկանապետ եւ Ասպետ:
- Սիւսի. — Իմ շնորհաւորութիւններս: (Բայց
բացատրէ՛ ինծի ...)

Գիւմարս. — (Լուէ՛) : Բայց մէկդի թողունք շնորհաւորութիւնները եւ ըսէ՛ ինծի թէ ի՞նչ կերպով դու այստեղ կը գտնուիս ...

Սիւսակ. — Ձերբակալուած վիճակի մէջ :

Գիւմարս. — Ձերբակալուած :

Սիւսակ. — Ի՞նչ օգուտ : Ես բնաւ տեղեկութիւն չունիմ : Երէկ ձերբակալուեցայ եւ ուզեցին բռնութեամբ որ ես Գիւմարսեան կոչուիմ : Բռնաբեցի, բայց ի գուր : Եւ գիտցիր որ չեմ գիտեր ալ թէ ի՞նչ ծանր ամբաստանութիւն եղած է իմ վրաս :

Գիւմարս. — Ո՛հ : Այս բանս ստուգիւ զարմանալի է : Տիպարական գործ մը ... Կրնաս ստուգիւ բաղդաւոր կոչել զքեզ՝ զիս հոս գտնելուդ համար, ապա թէ ոչ, անվերջ ձանձրութիւններ պիտի ունենայիր : (Գասպարիկ՝ սր խորր քաշուած կը դիտէ տեսիլը իբր երազի մը մէջ) Եւ դու կը ձերբակալես մէկ պատուաւոր մարդ մը ...

Սիւսակ. — Բայց ոչ ...

Գիւմարս. — Ո՛հ, այո՛, դուք Պ. Ասպետ տասն օր բանտարգել պիտի ըլլայիր :

Գասպար. — Բայց ես ...

Գիւմարս. — Բայց դու, այո՛, դու՛ քու այդ ցցուած պեխերովդ ... վա՛ր ա՛ն սա ցցուած պեխերդ ...

Գասպար. — Բայց ...

Գիւմարս. — (ուժով) վար ա՛ն, կը կրկնեմ :

Գասպար. — (վար կ'աւելնէ) :

Գիւմարս. — Այդպէս : Եւ վա՛յ քեզի եթէ ուրիշ անգամ իմ առջեւ ելնես այդ ցցուած պեխերովդ : Ո՛ւր ենք թուրքիո՞յ մէջ :

Սիւսակ. — Պ. Ասպետ, ինդրեմ, մի՛ յանդիմանէք զինքը : Յայտնի է սր սխալմունք մը եղած է :

Գիւմարս. — Բայց Գիւմարսեանը երբեք մօրուաւոր եղած չէ : Ի՛նչպէս կրցեր էք ձերբակալել

- անձ մը որ երկայն մօրուք ունի:
- Գասպար. — Ես չեմ գիտեր, որովհետեւ Գեղամ Նուիրակը ...
- Դիւնար. — Շատ լաւ, դու կրնաս դառնալ գինուորանոց:
- Գասպար. — (Երբարո՞ւ կ'ըլլայ) Անմիջապէս:
- Դիւնար. — Վայրկեան մը:
- Գասպար. — (Կը կեկայ):
- Դիւնար. — Ուրեմն ես ուրիշ ըսելիք չունիմ բայց եթէ ներողութիւն խնդրել քեզմէ որ... Սխալ. — Բայց ոչինչ, ոչինչ, մտածէ որ այսօր ինծի ... վաղը քեզի. պէտք է իրարու օգնենք, այնպէս չէ՞: Գործակցութեան դարու մէջ կ'ապրինք: (Պիտի բացատրես ինծի):
- Դիւնար. — (Ամէն բան: Փախի՛ր առժամ):
- Սխալ. — Այն ատեն եթէ թոյլ տաս սիրելի Ասպետ կը գնամ առնելու գլխարկս ու վաւազանս:
- Դիւնար. — Խնդրեմ, խնդրեմ, ձեր հանգիստը նայեցէք:
- Սխալ. — (Կոչու կ'երէ աչ կողմէն):
(Հեռախօսին զանգակը կը հնչուի)
- Դիւնար. — Կրողը տանի հեռախօսն ալ, (կը գնայ հեռախօսին վտ) Պատրաստ ... Ոստիկանապետ այո՛ ... Ա՛հ ... դեռ չկրցայ՝ ... շատ գործեր ... Պիտի գամ անպայման, է՛հ, Ռուբէնը՞: Չեմ գիտեր ... կը հարցնեմ փութով (դառնալով Գասպարին) լսէ՛, Պ. Ոստիկանապետին կինն է, կ'ուզէ գիտնալ թէ Ռուբէնը պաշտօնատուն դարձա՞ւ:
- Գասպար. — Դեռ ո՛չ:
- Դիւնար. — Ո՛չ. (հեռագրին մէջ խօսելով) Ո՛չ ... զարմանք ... ապահով դեռ կը շրջի փնտռելու համար Պ. Նուիրակը ... այո՛, այո՛ ... մի՛ տարակուսիր ... ծրար մը ... թղթերո՞ւ ... Շատ լաւ ... զրասեղանին վրայ ... լաւ, լաւ ... հազիւ թէ հասնի, կը զրկեմ զինքը այն ծրարովը ... խնդրեմ, ցտեսութիւն ...

ՏԵՍԻՒ, ՏԱՍԵՐԿՈՒԵՐՈՐԴ

Պ. ԳԻՍԱԿ յԵՍՈՅ ՍԻՍԱԿ ԵՆ ՎԵՐԻՆՔ

- Գիւմարս. — (միշտ ձեռախօսին քովն է եւ չի տեսներ Գիսակին մտնելը):
- Գիսակ. — Ներելի՞ է ...
- Գասպար. — Մտի՛ր:
- Գիսակ. — Ներեցէք, մոռցայ ասնելու գաւազանս: Ո՛հ, ահաւասիկ հոս է:
- Գիւմարս. — (Ղեռախօսին մօտ) ... շատ լաւ (կը վերցնէ ձաղորդակցութիւնը, յետոյ դառնալով կ'ըսէ Գիսակին) Ի՞նչպէս: Գեո հոս ես դո՞ւ ...
- Գիսակ. — (վախցած) Մոռցած ըլլալով գաւազանս եւ ...
- Գիւմարս. — Հասկցայ:
- Սիսակ. — (աչ կողմէն) Աիրելի Ասպետ, սիրով ...
- Գիսակ. — (որ լաւ զննած էր զՍիսակ կ'աղաղակէ) Ո՛հ, ահա իմ գողս ... ձերբակալեցէք զայն. ձերբակալեցէք զայն. ինքն է որ գողցաւ իմ դրամապանակս ...
- Ամենքը. — (ապշած իրարու երես կը նային):
- Սիսակ. — Բայց ո՞ւր ենք. խենթերու դարմանոց մը:
- Գիւմարս. — Ես ալ նոյն բանը կը հարցնեմ ինծի:
- Գիսակ. — (դիւանարի մը պէս աղաղակելով)
- Բայց ի՞նչ դարմանոց: Ի՞նչ յիմարներ. Պ. Ասպետ այս մարդը գող մըն է:
- Սիսակ. — Բայց այս բանս վատ անբաստանութիւն մ'է, եւ չեմ կրնար զիս զսպել չ'ապտակելու այդ մարդը:

Կեղծ Ոստի.

3

- Գիմարս. — Հանդարտէ՛, հանդարտէ՛ Պարոն...
 Գիսակ. — Ոստիկանապետ, կը կրկնեմ, այս մարդը զող մըն է ձերբակալել տուէք զայն:
 Սիսակ. — Ես գո՞ղ մը:
 Գիմարս. — Ո՛հ, կը բաւէ, Աստուծոյ սիրոյն, կը բաւէ:
 Գիսակ. — Ո՛չ, չի բաւեր: Եւ եթէ արգարու թիւն չընես ինձի, ես պիտի ընեմ անձամբ (կ'ուզե յարձակիլ Սիսակին վրայ):
 Սիսակ. — Անգգա՛մ:
 Գիմարս. — Շղթայեցէ՛ք զինքը:
 Գիսակ. — Զի՞ս:
 Գիմարս. — Զքեզ, զքեզ ...
 Սիսակ. — Վա՛ռ:
 Գիսակ. — Բայց այս թշնամանք մ'է: Լրազիրներուն մէջ խօսիլ պիտի տամ ...
 Գիմարս. — Կորսուէ՛ ... կորսուէ՛. հազուեցուցէ՛ք իրեն զգուշական շապիկը ... վտանգաւոր խենթ մըն է:
 Սիսակ. — Բռնեցէ՛ք զայն, բռնեցէ՛ք ...
 Գիսակ. — Թշնամանք մ'է, թշնամանք մ'է ...
 Գիմարս. — Կորսուէ՛, գնա՛ (Գասպար քաշելով կը տանի):

ՏԵՍԻՒ, ՏԱՍԵՐԵՔԵՐՈՐԳ

ԳԻՄԱՐՍԵԱՆ և ՍԻՍԱԿ

- Երկուքը. — (առանձին մնալով՝ իրարու երես կը նային վայրկեան մը և յետոյ ուժով ծիծաղ մը կը փրցնեն):
 Սիսակ. — Բայց ըսէ՛ ուրեմն ինձի, ի՞նչպէս կ'ըլլայ այս գործը:
 Գիմարս. — Ի՛նչ գիտնամ. ուշեցին զիս իրենց

Ոստիկանապետ ճանչնալ ... միթէ յանցանքըն իմս՞ է:

Սխտակ. — Բայց դու, սիրելիս, հրաշալի կերպով կը կատարես քու պաշտօնդ: Ամէնքն ալ այսպէս պէտք են ընել:

Դիմարս. — Կեցցե՛ս. ծակը թխել բոլոր պատուաւոր մարդիկը եւ ազատ թողուլ սինլըքորները:

Սխտակ. Եւ ինչո՞ւ չէ:

Դիմարս. — Բայց փիլիսոփայութիւն ընելու ատեն չկայ: Վաշրկեանները կ'անցնին եւ ես դեռ կերած չեմ: Դու կծիկը դի՛ր ... գողցած 200 ֆրանգիդ համար ...

Սխտակ. — (ծիծաղելով) ... Վտանգաւոր խենթէն ...

Դիմարս. — Այո՛:

Սխտակ. — Ապահովութեան մէ՞ջ եմ հանդէպ... կը հասկնաս ըսելիքս:

Դիմարս. — Կատարեալ կերպով: Կրնա՞մ հաշուել անոր ...

Սխտակ. — Կէտի՞ն վրայ: Ազատութիւնս քեզի չե՞մ պարտիր:

Դիմարս. — Քիչ կը մնայ հոս վերջացնեմ խաղս եւ հետդ գամ:

Սխտակ. — Աքանջելի գաղափար: Երթա՛նք: (դուրս ելլելու վրայ կ'ըլլան):

ՏԵՍԻՆ, ՏԱՍՆԸՉՈՐՍԵՐՈՐԴ

ԶԱՐԵՆ և ՎԵՐԻՆՔ

Զարեհ. — Պ. Ոստիկանապետ, ձերբակալուածքը այն կողմը կը կենայ ...

Դիմարս. — Ա՛հ, կեղծ դրամներ շինո՞ղը: Շատ լաւ:

Սխտակ. — (մեկուշտի) (եւ կը փախչիմ):

- ուրեմն մնաս բարով ... սիրելի Ասպետ, եւ
հազար շնորհակալութիւն:
- Դիւնարս. — Խնդրեմ, խնդրեմ, ընդհակառակն,
դու պէտք ես ինձի ներողամիտ ըլլալ:
- Սիւսակ. — Դէպքեր են որ կը պատահին ...
իրեր ...
- Դիւնարս. — ... հանդերձեա՛լ աշխարհին, այո՛:
Ո՛ղջ լեր, ո՛ղջ լեր:
- Սիւսակ. — (մեկուշի) (Սպասէ՛, տխմար, 100
Ֆրանգին):
- Դիւնարս. — Ուրեմն ձերբակալուածը, ըստ որում
Պ. Նուիրակը ինձի հեռագրեց, գրամանենզը
պիտի ըլլայ:
- Ջարեհ. — ձիշտ ան է:
- Դիւնարս. — Խուզարկեցի՞ք զայն:
- Ջարեհ. — Ոչ:
- Դիւնարս. — Շուտ մը խուզարկեցէ՛ք զինքը:
- Ջարեհ. — (դուրս կ'ելլէ):

ՏԵՍԻԼ, ՏԱՍԵՐԸ ԷԻՆԳԵՐՈՐԿ

ԴԻՄԵՔՍԵԱՆ միայն, յետոյ ԳԱՍՊԱՐ

- Դիւնարս. — Բայց, ես ա՛լ ոտքի վրայ կենա-
լու ոյժ չունիմ անօթութենէ, եւ այս ճիշտ
Տանտաղոսի պատիժն է: Ջարդենք:
- Գասպար. — Ներելի՞ է:
- Դիւնարս. — Դարձեա՛լ (կը ծածկէ պնակը):
- Գասպար. — Այն խենթը հանգստացեր է:
Ազա՛տ պէտք եմ թողուլ զինքը:
- Դիւնարս. — Բնա՛ւ: Թող այս զիշեր այն կոշտ
տախտակին վրայ քնանայ, վաղը առաւօտ
զինքը խենթանոց կը զրկենք: Բայց այն Ռու-
բէնը դարձա՛ւ թէ ոչ:

Գասպար. — Ոչ, Պ. Ոստիկանապետ: Ապահով
դեռ քաղաքը ժուռ կու գայ Պ Նուիրակը
փնտսելու համար:

Դիմարս. — Է՛հ, գէջ չէ: Այն ատեն պէտք
պիտի ըլլայ հոն դրկել ... Ինչը ...

Գասպար. — Զարեհ՞ը:

Դիմարս. — Զարեհը, Պ. Ոստիկանապետին
տունը այս ծրարով ... ապահովապէս ասի-
կայ պիտի ըլլայ, ուրիշ մը չեմ տեսներ:
(ցոյց կու տայ Պ. Դաւիթի ծրարը):

ՏԵՍԻՒ, ՏԱՍՆԸՎԵՑԵՐՈՐԴ

ԶԱՐԵՀ և ՎԵՐԵՆԵ

Զարեհ. — Պ. Ոստիկանապետ, այս սիկարի
ծրարէն գատ ուրիշ բան մը չկայ:

Դիմարս. — Ապա թղթապանակին մէջ:

Զարեհ. — Ոչի՛նչ:

Դիմարս. — (բնական) Այն ատեն ինծի պէս
յուսահատ մարդ մ'է:

Զարեհ. —

Գասպար. — { Է՛հ:

Դիմարս. — Յայտնի է, ինծի նման կ'երեւա-
կայէի զինքը ... ահաւասիկ: Ինծի տուր այն
սիկարները (մեկուսի) «առաջնակարգ վիրճի-
նիա» (հոտոտելով գայն) հոտէն կ'իմանամ
որ գողունի են: Զասոնք ես պիտի փորձեմ
(գրպակը կր դնե) Եւ հիմա դու ... դու ...

Զարեհ. — Զարեհ:

Դիմարս. — Գնա՛ շուտ մը այս ծրարով Պ.
Ոստիկանապետին տունը: Ըսէ՛ իրեն որ այս
երեկոյ ասկից պիտի ելլեմ երթամ ... (իկն
իրեն գալով) կ'ուզեմ ըսել պիտի երթամ
զինքը գտնելու:

Զարեհ՝ — Շատ լաւ: Ուրիշ հրաման մ'ունիք:
 Գիւմարս. — Ո՛չ, գնա՛ հսկելու այն խենթը:
 Մի՛ դառնար հոս մինչեւ որ գրեզ չկանչեմ:
 Ամենակարեւոր գործ մ'ունիմ լմնցնելիք եւ
 կ'ուզեմ որ զիս չխոսովեն: Հասկցա՞ր:
 Գասպար. — Հրամմեր էք: (կ'ելլէ):

ՏԵՍԻՒ, ՏԱՍՆՈՒԵԹԵՐՈՐԴ

ԳԻՄԱՐՍԵԱՆ միայն, յետոյ ԱՊԳԵՏ ՍՈՒՐԵՆ

Գիւմարս. — Վերջապէ՛ս: Անօթութենէ աչքերս
 ա՛լ չեն տեսներ, աչքերուս անջեւ ամենախիտ
 մշուշ մը կայ: Տկարութեան արատսովոր
 երեւոյթներ: Մեր գործին նայինք ... Հար-
 դենք:

Սուրեն. — (Հասպար կը մտնէ և բարցօն և
 գլխարկը կը դնէ զգեստակաշին վրայ: Գե-
 դեցիկ մարդ մ'է, աղերեկ մտռռորով, կարճ
 կը խօսի, ստոյգ ազնուական մը) Բարի լո՛յս:

Գիւմարս. — (Հուտ մը կերակուրը կը գոցէ և
 եկողին կը նայի սպշած):

Սուրեն. — Գուք է՞ք ...

Գիւմարս. — Նու, նու, նու ...

Սուրեն. — Նուիրակը՞, շատ լաւ (նկարը անոր
 կ'երկնցնէ, զոր Գիւմարսեան կը սեղմէ): Պ.
 Գեղամ բացակա՞յ է:

Գիւմարս. — Գուրս ... դուրս ... դուրս ...
 բայց ...

Սուրեն. — Այո՛, կատարելապէս իրաւունք ունի:
 Գուք զիս չէք ճանչնար (անոր կու տայ այ-
 ցետուն մը): Ես Ասպետ Ոստիկանապեան
 եմ Սուրենը: Զընդունեցա՞ք իմ հեռագիրս:

Գիւմարս. — (Ներեցէ՛ք): Ընդունած ... այո՛

ընդունեցանք ... Բայց դուք ժամը 12ին.
ընթացքով պիտի հասնէիք:

Սուրբէն. — Ստոյգ է. բայց վերջին պահուն
իմ՝ ամենասիրելի բարեկամներէս մին իմ
տրամադրութեանս դրաւ ամենարագ ինքնա-
շարժ մը եւ ճամբան կտրեցինք կէս ժամէն
աւելի քիչ (դադար): Ուրեմն ի՞նչ նորութիւն.
նախ եւ առաջ Պ. Գուրգինով ի՞նչ վիճակի
մէջ է:

Գիւմարս. — Ամենալաւ, ամենալաւ:

Սուրբէն. — Ինչպէ՛ս թէ ամենալաւ: Քանի որ
գիտ կը դրկէ որ իր տեղը բռնեմ, ամենածա-
նրը հիւանդ ըլլալուն համար:

Գիւմարս. — Բայց ոչ՛, ի՛նչ կ'ըսեմ ... ես կը
շփոթէի ուրիշ մէկ Գուրգէնովի մը հետ:

Սուրբէն. — Ուրե՛մն:

Գիւմարս. — Մահացու է:

Սուրբէն. — Ի՛նչ: Պատշաճ է հետեւաբար որ ես
երթամ գինքը տեսնեմ:

Գիւմարս. — Անհրաժեշտ է:

Սուրբէն. — Ո՛ր կը բնակի:

Գիւմարս. — Քաղաքիս մէջ:

Սուրբէն. — Գիտեմ, փողոցը՞:

Գիւմարս. — Փողոց ... փողոց ... մաքի բռ-
նուածութիւն ... փողոց, փողոց ... (շուտով)
ինքնաշարժ մը կանչեմ հեռաձայնով:

Սուրբէն. — Շա՛տ հեռու է.

Գիւմարս. — Հեռու է, շատ հեռու 12 հազա-
րամեղր:

Սուրբէն. — Այն ատեն քաղաքէն դուրս է:

Գիւմարս. — Դուրս է ... դուրս ...

Սուրբէն. — Վաղը կ'երթան հոն:

Գիւմարս. — «Այ»:

Սուրբէն. — Խեղճ Գուրգէնով: Այնչափ խելա-
ցի եւ իր պարտուց մէջ այնչափ ճշդապահ
պաշտօնեայ մը, որ իր մեծերուն յարգանքը
եւ վստահութիւնը շահեր էր, պիտի թողու

- իր ընտանիքը եւ բարեկամները եւ ընդհատել չքեղ ընթացք մը այսպիսի ազիտաբեր կերպով: Ի՞նչ ընես: Բնութեան օրէնք է որուն մենք խեղճ մահկանացուներս պէտք է որ հպատակինք համակերպած (կը հառաչէ): Թողունք այս ամէնը եւ դառնանք մեր գործերուն: Ուստի ի՞նչ նորութիւն կայ: Հեռք մը ունիք այս դրամանենդներու նկատմամբ: Ա՛հ հիմա հաստատուած է որ կեղծ դրամաթղթերուն շինութիւնը այս քաղաքիս մէջ կը կատարուի: Ո՞ւր են տեղեկագրութիւնները ...
- Դիմարս. — Պ. Ոստիկանապետին տունն են:
- Սուրբեկ. — Իսկ Ոստիկանարանին դիտողութիւնները:
- Դիմարս. — Չանոնք Պ. Գեղամ Նուիրակն առած է:
- Սուրբեկ. — Ասիկա՞ է Ոստիկանարանին գրասենեակը թէ արդեօք ...
- Դիմարս. — Ո՛չ, ոչ. ասիկա իմ եւ Գեղամ Նուիրակին գրասենեակն է: Չեր գրասենեակն ... (ցոյց տալով դէպ ի ձախ կողմնակի) հոն է ...
- Սուրբեկ. — Հո՞ն: Երթամ շուտ մը տեղաւորուիմ հոն: Ներեցէք պարոն ... ի՞նչ է ձեր անունը:
- Դիմարս. — (ընկալաւ օրէն) Ասպե... (չուտ մը ինքզինքը գտնելով) Ասպետեան:
- Սուրբեկ. — (զարմացած) Ասպետեան: Մի՛ գուցէ ազգական ըլլաք քաղաքիս մէջ Պ. Հասընկալ Ասպետեանին:
- Դիմարս. — Ամենամօտիկ ազգականը:
- Սուրբեկ. — Տէ՛ս դու դիպուածը: Իմ ամենասիրելի եւ մտերիմ բարեկամս է ան, եւ երբէք խօսք մը չըրաւ ինձի Ոստիկարանիս մէջ պաշտօնեայ մը ունենալուն վրայ: Իրեն թո՞ռն էք թէ եղբօր կամ քրոջ որդին ...
- Դիմարս. — Եղբօրորդի՞ն եմ:
- Սուրբեկ. — Հաճոյքով կը սեղմեմ իմ խիստ

մեծ բարեկամիս եղբորորդւոյն ձեռքը:

Դիմարս. — Հաճոյքն իմօ է ...

Սուրբեն. — Լաւ յիշեցի, ինչպէ՞ս է իր տիկինը:

Գրեց ինծի որ քիչ մը հիւանդացեր էր եւ ...

Դիմարս. — Մեռա՛ւ:

Սուրբեն. — Ի՞նչ կը լսեմ ...

Դիմարս. — Այո՛, մեռաւ:

Սուրբեն. — Ստո՞յգ կ'ըսես:

Դիմարս. — Պատւո՞յս վրայ:

Սուրբեն. — (ցաւով) Խեղճ բարեկամ: Չեմ կրնար հասկնալ թէ ինչպէս ինծի չգրեց այդ բանը: Ապա իր աղջիկը: Օրիորդ Շուշան:

Դիմարս. — Ամուսնացաւ:

Սուրբեն. — Ամուսնացա՞ւ:

Դիմարս. — Յայտնի է: Եւ երկու որդիներ ունի մանչ մը եւ աղջիկ մը:

Սուրբեն. — Անկարելի՛ բան: Բայց դեռ անցեալ ամիս, երբ իմ աղջկանս տեսութեան եկաւ, դեռ օրիորդ մ'էր, ի՞նչպէս ուրեմն կարելի է ...

Դիմարս. — Բայց ամենաստոյգ է ... ես միւսին հետ կը շփոթէի ... անիկա որ դպրոցն էր:

Սուրբեն. — (գարմացած) Ինչպէ՞ս ... Մարիամը ...

Դիմարս. — (գոճ ըլլալով որ նպատակին հասաւ) Այո՛, Մարիամը:

Սուրբեն. — (ծիծաղելով) Ա՛հ, ա՛հ: Կը գուշակէի զայն:

Դիմարս. — (իներև ալ ծիծաղելով) Ճիշտ չէ՞ ըսածս ... Մարիամը, ա՛հ, ա՛հ:

Սուրբեն. — (ցոյց տալով անխակողմը) Ուրեմն այս կողմէն, այնպէս չէ՞ ...

Դիմարս. — Ճիշտ այդ կողմէն:

Սուրբեն. — (դուռը բանալով) Ի՞նչպէս: Բայց ասիկա սրահ մ'է:

Դիմարս. — «Մաղը պիտի ծակի» (սիրտ առնելով) Ահաւասիկ ... կը տեսնէ՞ք հոն ձախակողմը այն դռնակը ...

Սուրբեն. — Լա՛ւ, յետո՞յ

Դիմարս. — Անիկա է ձեր գրասենեակին դուռը:

Սուրբէն. — Տեսայ գայն: Ներեցէ՛ք:

Դիմարս. — Խնորեմ:

Սուրբէն. — (դուրս կ'երկ):

Դիմարս. — Ճաթէ՛ (կը գոցէ դուռը բանալիով):

Ո՛վ գիտէ ո՛ւր կը տանի այդ դուռը ... Հիմա պէտք է կծիկը դնել եւ շուտով որ չըլլայ թէ գլխուս ձախ բան մը պատահի: Եկո՛ւր սիրելի հաւիտս, գրեզ բաց օդին տակ պիտի տեսնեմ: (գրպանը կը դնէ սաշեղակն ու սացը):

ՏԵՍԻԼ ՏԱՄՆՈՒԹԵՐՈՐԳ

ԳԱՍՊԱՐ և ՎԵՐԵՐԵ

Գաւպար. — Պ. Ոտիկանապետ, այն խեղճ յիմարը կ'ուզէ ձեզի հետ խօսիլ ...

Դիմարս. — (վսեմարար) Լուսթի՛ւն:

Գաւպար. — Է՛հ.

Դիմարս. — Լուսթի՛ւն: Հնարքով մը յաջողեցայ հոն՝ ներսը փակել ... (ձայնը փոխելով): Լաւ միտքս ինկաւ, ո՞ւր կը տանի հոն սրահին ծայրը եղած այն դանակը:

Գաւպար. — Գէտլի արտաքնոց:

Դիմարս. — Աքանչելի՛. (մեկուշի) «նոր տեսակ գրասենեակ մը»: Ուտի կրցայ հնարքով մը հոն ներս փակել ուրիշ մէկ վտանգաւոր խենթ մը:

Գաւպար. — Բա՛րէ:

Դիմարս. — Յայտնի է: Խուժեց գրասենեկին մէջ սաքէն մինչեւ գլուխը գինուած, դիւահարի մը պէս ոռնալով: Ուր է Գեղամը. կ'ուզեմ գինքը սպաննել ... ծարաւի եմ անոր արիւնին ...

Գաւպար. — Գեղնորակն է անտարակոյս:

Դիմարս. — Ընդհակառակն, ածուխի պէս

սեւ է:

Գասպար. — ... իմ դեղնորակ ըսածս տեսակ մը աւազակ է դեղին ձեռնոցներով, խիստ երկչուտ, որ երգում ըրած է սպաննելու Պ. Գեղամ Նուիրակը, որովհետեւ օր մը, զինքը գանկելով վրան տարճանակ պարպեց, առանց կարենալ հարուածելու զինքը, սակայն ...

Դիմարս. — Ո՛հ. Այս բանս հասկնալի է ... Ահա քեզի բանալին: Ես միւս խենթին քով կ'երթամ: Եւ եթէ փորձէ դուռը կոտրել ... կրակէ՛, կրակէ՛ առանց խղճալու:

Գասպար, — Մի՛ տարակուսիք (յուրս կը հանկ տարճանակը):

Դիմարս. — (մեկուշի) «Անդիէն պէտք է ուրիշ ելքի դուռ մ'ըլլայ, կծկենք» (աչ կողմէն յուրս կ'երթի):

ՏԵՍԻՒ, ՏԱՄՆՈՒԻՆՆԵՐՈՐԴ

ԳԱՍՊԱՐ միայն, յետոյ ՆՈՒԻՐԱԿը և

ԱՍՊԵՏ ՍՈՒՐԵՆ

Գասպար. — Ուրեմն պահակ կենամ: Դիտենք քիչ մը թէ ի՞նչ կ'ընէ ... (բանալիին ծակէն ներս կը նայի):

Գեղամ. — Ի՞նչ կ'ընես հոն, Գասպար:

Գասպար. — (յուրջ) Լսուի՞նքն կ'աղաչեմ ...

Գեղամ. — Ի՞նչ պատահեցաւ:

Գասպար. — Հոն, ներսն է ... դեղնորակը:

Գեղամ. — Ի՞նչպէս:

Գասպար. — Ստոյգ կ'ըսեմ: Կամ գոնէ կ'ենթադրեմ որ նա ըլլայ: Զինքը ներս փակեց Պ. Ոստիկանապետը նորագիւտ հնարքով մը. կ'ըսէ թէ ոտքէն մինչեւ գլուխ զինուած, է եւ թէ

աչքերը տեղէն դուրս ցցուած՝ շարունակ կը
գոչէր. ո՞ւր է Գեղամը որ սպաննեմ գայն ...
արիւն:

Գեղամ. — Բա՛բէ: Ապա Ոստիկանապե՞տը:

Գասպար. — Անդին է ուրիշ մէկ խենթի մը
հետ: Հրաման տուաւ կրակելու եթէ ...

Սուրեն. — (դուռը կը գարնէ):

Գեղամ. — Գեղնորակը պիտի ըլլայ անպատ-
ճառ:

Սուրեն. — (դուռը կը գարնէ): Բացէ՛ք, բա-
ցէ՛ք:

Գեղամ. — Անձնատո՛ւր եղիր եթէ կ'ուզես
խնայել կեանքիդ ...

Սուրեն. — (դուռը կը գարնէ) Բայց ի՞նչ կեանք:
Բացէ՛ք Աստուծոյ սիրոյն, կամ դուռը կը
կոտրեմ:

Գեղամ. — Ինքն է: Գեղնորակն է, ալ տարա-
կոյս չկայ: Գիրքերնիս լաւ մ'որոշենք: Այս
անգամ պատուաւոր ելլենք. ինծի աստիճա-
նի բարձրացում մը, քեզի պարգեւ մը: Գու-
զգուշութեամբ դուռը պիտի բանաս և հազիւ
թէ ներկայանայ՝ իրեն պիտի ուղղես ատրճա-
նակդ պոռալով՝ կեցի՛ր կամ կը կրակեմ: Ես
ալ անոր ուղղելով իմս պիտի գոչեմ կեցի՛ր
կամ կը կրակեմ. հասկցա՞ր:

Գասպար. — Կատարելապէս:

Գեղամ. — Պատրա՛ստ ուրեմն:

Սուրեն. — (ներսէն) Բացէ՛ք կ'ըսեմ. Աստուծո՛յ

Գեղամ. — (շուրջ և ծանր) Նուիրակ Գեղամ
բանալ կու տայ դուռը, և յանուն օրինաց
կ'իմացնէ քեզի որ ձերբակալուած ես: Ա՛հ,
դու կ'ուզէիր սպաննել զիս ... քու ձեռքովդ
լարած որոգայթիդ մէջ ինկած ես:

Սուրեն. — (դուռը կը գարնէ) Բայց դուք
խենթցե՛ր էք: Բացէ՛ք կ'ըսեմ. Աստուծոյ համար:

Գեղամ. — (խնչպես ղերեշ) Գեղամ Նուիրակը
հրաման կու տայ բանալու: Զգոյշ եղիր մատ

- չչարժելու ... ապա թէ ոչ կը սպաննենք
 գրեզ: (հրաւնայական) Բաց ... եւ ուշադիր:
 Գասպար. — (յուշը կը բանայ զգուշութեամբ):
 Գասպար. — {
 Գեղամ. — { Կեցի՛ր կամ կը կրակե՛մ:
 Սուրեն. — (ատրձանակը հանելով) Ի՞նչ է
 պատահածը ... Գեղամ, ի՞նչ կ'ընէք ...
 Երկուքը. — (իրարու կը նային եւ գետին կը
 ձգեն ատրձանակնին) Ոստիկանապե՛տը:
 Գեղամ. — Կերեցէ՛ք, ներեցէ՛ք, ես ասոր մէջ
 յանցանք չունիմ ...
 Սուրեն. — Բայց ի՞նչ է այս եղածը: Ո՞ր
 է այն նուիրակը որ քիչ առաջ հոս էր:
 Գեղամ. — (Գասպարին) Բայց վերջապէս ի՞նչ
 էր ուրեմն այն ինծի ըսածդ հնարքի մը մասին,
 Ոստիկանապետին եւ Գեղնորակին վրայօք:
 Գասպար. — Ես ապշե՛ր մնացեր եմ. ո՞վ է
 այն պարոնը ...
 Գեղամ. — Ոստիկանապետն է Ասպետ Սուրէն:
 Գասպար. — Այն ատեն խաղ մը խաղցեր են
 մեր գլխուն:
 Սուրեն. — Բայց ի՞նչպէս: Որմէ՞:
 Գասպար. — Այն խաբեբան որ յանդգնեցաւ
 զձեզ հոս ծակը փակելու, ինքզինքը Ոստի-
 կանապետ Ասպետ Սուրէն հռչակել տուաւ:
 Ես չճանչնալով զինքը, հաւատացի իրեն եւ
 ահա մէկ ու կէս ժամէ ի վեր տիրաբար կը
 հրամայէ հոս:
 Գեղամ. — Եւ հիմա ո՞ր է:
 Սուրեն. — Ո՞ր է, ո՞ր է նա:
 Գասպար. — Դէպ ի հո՛ն:
 Գեղամ. — Այն ատեն փախած է:
 Սուրեն. — Եւք մը կա՞յ հոն: (Գեղամ դէպ
 այն կողմը կ'երթայ):
 Գասպար. — Այո՛, բայց զոց է, բանալին
 իմ քովս է: Փակեցի զայն՝ որպէս զի չփախ-
 չի այն մարդը՝ որուն համար այն խաբեբան
 կը պնդէր եւ կ'ուզէր որ խենթ համարուի:

Սուրբեն. — Գէշ չէ:

Գեղամ. — Ահաւաստիկ ինքը հոս է:

ՏԵՍԻԼ ՔՍԱՆԵՐՈՐԳ

ԳԻՍԱՔՍԵԱՆ և ՎԵՐԵՆՔ

Գեղամ. — (ուշտով) Ո՛չ մէկ քայլ, ո՛չ մէկ շարժում, ապա թէ ոչ կը սպաննեմ:

Գիւնարս. — Ձեմ շարժիր (գամուշած կը մնայ դրան կողմնակի սեմին):

Սուրեն. — Ի՞նչ է անունդ:

Գիւնարս. — Գարեգին (մեծ հաւաւջանքով մը) Գիմաքսեան:

Գեղամ. — Հասկցա՛յ, այն պարապորդ Գիմաքսեանը ...

Գիւնարս. — Վտանգաւոր, այո՛:

Սուրեն. — Ի՞նչ էր պատճառը որ քեզ դրդեց Ոստիկանապետ հռչակելու զքեզ:

Գիւնարս. — Ո՛չ մէկ պատճառ չկայ: Ես՝ հոս եկած էի ինքզինքս յանձնելու, կ'ուզէի որ զիս ձերբակալեն, մէկ խօսքով նպատակս էր քանի մը օրուան հացս ապահովցնել, ... զիս Ոստիկանապետի տեղ առին, եւ ես ալ եղած խաղին յարմարեցայ: Միթէ յանցանքն ի՞մս է:

Սուրեն. — Շատ լաւ, հաշիւդ վերջը կը տեսնենք: Խուզարկեցէ՛ք զինքը:

Գիւնարս. — (պռաւարով) Ո՛չ:

Սուրեն. — Ինչպէս ո՛չ: Խուզարկեցէ՛ք զինքը:

Գիւնարս. — (ձեռները վերնազգեստին գրպանին մէջ դնելով, ուր մեծ խնամքով պահեր էր հաւնդներ ու հացը) Ո՛չ, ո՛չ. դատապարտեցէ՛ք զիս եթէ կ'ուզէք, բայց մի՛ կրել տաք ինձի խուզարկուելու նուաստութիւնը:

Սուրեն. — Հասկցա՛յ: Դու ղէնք ունիս վրադ:

Գիւմարս. — Ո՛հ, զէնք չէ, անկէ դուրս մթերք-
ներ ...

Սուրեն. — Խուզարկեցէք զինքը:

Գիւմարս. — (դուրս հանելով հաշեղենը ու
հացը) Ահաւասիկ ... իմ սազմամթերքս ...
որոնք պատրաստուած էին այն բերդին հա-
մար որ հազիւ հազ ոտքի վրայ կը կենայ
անզուժ անօթուժենէն:

Սուրեն. — Ուրիշ բան չկա՞յ.

Գիւմարս. — (գրեթէ լալով) Ուրիշ ոչինչ Պ.
Ոստիկանապետ:

Սուրեն. — Տարէք զինքը արգելանոց և տուէ՛ք
որ ուտէ:

Գիւմարս. — Երթանք, երթանք արգելանոց
զոր ես պիտի կոչեմ ... ազատանոց (կրքալու
վրայ կ'ըլլան)

ՏԵՍԻՒ, ՔՍԱՆԾՐԷԿԵՐՈՐԴ

ԴԱՌԹ և ՎԵՐԵՐ

Դաշիր. — Ներելի՞ է:

Սուրեն. — Առա՛ջ եկուր:

Դաշիր. — (Գիւմարսեանիկն) Բարի լոյս, Պ. Ոս-
տիկանապետ

Սուրեն. — Բարի լոյս:

Դաշիր. — (սևոր կը կայի և յետոյ դառնա-
լով Գիւմարսեանիկն) Ուրեմն ես եկայ տեսնե-
լու համար թէ կրցա՞ք ձեր խօսքին վրայ
կենալ:

Սուրեն. — Ո՞ր խօսքին:

Դաշիր. — (նեղուշով) Ո՛հ, ի՛նչ կը մտնես դու
մեր գործին մէջ ... ես Պ. Ոստիկանապե-
տին հետ կը խօսիմ:

Սուրբէն. — Բայց Ոստիկանապետն ես եմ:

Դաւիթ. — Այն ժամանակ պարոննը ...

Սուրբէն. — Ճարտար խաբեբայ մըն է:

Դաւիթ. — Ա՛յ, թշուառակա՛ն. հանէ՛ վրայէդ իմ վերնագգեստս:

Դիմարս. — Վայրկեա՛ն մը:

Դաւիթ. — Ի՛նչ վայրկեան: Հանէ՛ կ'ըսեմ:

Դիմարս. — Կամա՛ց, կամա՛ց. Պ. Ոստիկանապետ ձեզմէ շնորհք մը կը խնդրեմ:

Սուրբէն. — Ի՛նչ է:

Դիմարս. — Կ'ուզեմ պատասխանել այս պարոնին:

Սուրբէն. — Ըսէ՛ ուրեմն, բայց շուտով:

Դիմարս. — Կարճ պիտի խօսիմ, որովհետեւ անօթութիւնը զիս պիտի մեռցնէ: Դու եկած էիր այս պաշտօնատունը բողոքելու համար քեզմէ եղած գողութեան վրայ եւ պաշտօնապէս խօսք առիր, փոյթ չէ թէ անկէ, որ քու վերնագգեստը առնողն եղած էր: Իմ դիտաւորութիւնս էր, ուտի, ետ տալու գայն, բայց ոչ այն ժամանակ, որովհետեւ եթէ հանէի վրայէս այս թերմաշը, պիտի տեսնուէին իմ հազուստիս պատուածներն եւ կարկտաններն, ինչ որ իմ դրութիւնս վտանգի մէջ պիտի դնէր: Դու դարձար, ես իմ խօսքս կը պահեմ, եւ քեզի կը վարադարձնեմ վերնագգեստը: Հետեւաբար այդչափ ձայն բարձրացնելու իրաւունք չունիս. մանաւանդ թէ պէտք է ինծի շնորհակալ ըլլաս, վասն զի Կեղծ Ոստիկանապետի մը տեղ՝ եթէ գտած ըլլայիր ... այո՛ ... վերջապէս կը հասկնաս ըսելիքս ... այս վայրկենիս ստոյգ է որ եւ ոչ իսկ զգեստիդ աստառը պիտի գանէիր:

Սուրբէն. — Ո՛հ. բաւական է: Տուր վերնագգեստը պարոնին՝ եւ պատասխանատու ես եղած գողութեան:

Դիմարս. — Ահա վերնագգեստդ:

Գառիբ. — Նուազագոյն մնասը:

Գիւմարս. — Վայրկեան մը: Լաւ պիտի ըլլայ որ հազնելէդ առաջ լուալ տաս զայն դեղաջուրի մէջ: Զի գիտցուիր բնաւ ... ես չեմ կրնար մտահեցնել ...

Գառիբ. — Հասկցա՛յ: Լաւ ուրեմն ... պահէ՛ վերնազգեստը ... քեզի կը պարգեւեմ զայն, ետ տուր ինծի միայն թղթերը:

Գիւմարս. — Ո՛հ օրհնած ըլլաս ... իմ տար ուտերս անհունս երախտագէտ պիտի ըլլան քեզի: Ահաւասիկ... ա՛հ... զանոնք հոն գրասեղանին վրայ դրի ...

Գառիբ. — Բայց հոս ոչ մէկ բան չկայ:

Գիւմարս. — (ձակատը բախելով) Յիմա՛ր, յիմա՛ր, հազար անգամ յիմար: Պ. Ոստիկանապետը թղթի ծրար մը ուզեց եւ ես սխալմունքով անոր զրկեցի քու թղթերդ:

Սուրեն. — Որո՞ւ ձեռքով:

Գիւմարս. — Պահակի մը միջոցաւ:

Գասպար. — Զարեհին:

Գառիբ. — Պէտք է շուտով ետեւէն վազեմ: Ի՞նչ է անունը, ո՞ւր կը բնակի:

Գեղամ. — Ասպետ Գուրգէնով, նոր ճամբայ թիւ 37. Ա. յարկ:

Գառիբ. — (յակնարժակիս շարժում մ'ընելով) Է՛հ, ո՛չ, ո՛չ, չի կրնար ըլլալ:

Սուրեն. — Ի՞նչպէս:

Գեղամ. — Ինչո՞ւ համար:

Գառիբ. — Զէ՞ որ հիւանդ է նա:

Գեղամ. — Այո՛:

Գառիբ. — Բժիշկ Մարտիկի խնամքին ներքեւ չէ՞:

Գեղամ. — Ճիշտ այդպէս:

Գառիբ. — Վայ ինձ, եթէ Պ. Գուրգէնով կարդայ այն թուղթերուն մէջ գտնուած մէկ նամակս, ես կորսուած եմ:

Սուրեն. — Ինչպէ՛ս թէ ...

Գեղամ. — Ի՞նչ պատճառաւ.

Դաւիթ, — Ապահովապէս Պ. Մարտիկ ճիշտ ատոր համար կը գրէ ինծի որ այսօր ես Պ. Գուրգէնովին տունը երթամ զայն խնամելու համար. ինքը ստիպուած ըլլալով քանի մ'օր քաղաքէն բացակայիլ եւ ...

Սուրեն. — { Եւ ուրե՞մն:

Դաւիթ. — Ուրեմն Պ. Մարտիկ ինձ կ'ըսէ որ զայն բուժելու գործը երկար բռնեմ, որովհետեւ առատ վճարող մէկն է ... երեւակայական հիւանդ մը ...

Գեղամ. — { Ա՛հ, ա՛հ, ա՛հ:

Սուրեն. — { Այս բանս հաճոյք կը պատճառէ ինծի, որովհետեւ կը տեսնուի որ Պ. Գուրգէնովի հիւանդութիւնը բնաւ ծանր չէ:

Դաւիթ. — Ի՞նչ կ'ըսես, Աստուած իմ: Յուսամ թէ կարգացած չի ըլլար այն թուղթը:

ՏԵՍԻՆ, ՔՍԱՆԵՐԿՈՒԵՐՈՐԳ

ԶԱՐԵՆ ԵՆ ՎԵՐԻՆՔ

Գեղամ. — Ա՛հ. ահաւասիկ Զարենը:

Զարեն. — (զայրացած, եւ դառնալով Գիւնարսեանիկն) Կրողը տանի: Պ. Ոստիկանապետ:

Գեղամ. — Ահաւասիկ Պ. Ոստիկանապետը: Այդ մարդը խաբէբայ մըն է:

Սուրեն. — Ո՛ւր է թուղթերու այն ծնարն որ քեզ յանձնուած է:

Զարեն. — Ա՛հ. չեմ հասկնար ... Բայց ներեցէք ի՞նչ թղթերու վրայ կը խօսիք, անո՞նց վրայ որ ինծի տրուեցաւ Ոստիկանապետին տանելու:

Դաշիր. — Այն թղթերը իմօ են, իմօ:

Դիմարս. — (շուտով) Իր ապրանքն է, իր ապրանքը:

Զարեհ. — Ոստիկանապետը բացաւ ծրարը ու թուղթերը: Մանուշակագոյն պահարանի մը մէջ կար նամակ մը: Շուտ մը բացաւ զայն: Աչքերը դուրս ցցուած էր, նամակը տիկնոջ տուաւ ըսելով՝ կարդա՛ ... կարդա՛ ... խեղճ տիկինը մարեցաւ: Իսկ Ոստիկանապետը ոտաւն մ'ըրաւ անկողինէն դուրս ցատկելով, եւ սկսաւ շրջաններ ընել բոլոր սենեակին մէջ ու խենթի մը պէս աղաղակել: Կալանաւորուի՛, մշտնջենաւոր աքսորի դատապարտուի ...: Ես որ բնաւ չէի հասկնար եղածը, ասի ծրարը՝ զոր օդին մէջ նետած էր եւ հազիւ կրցայ փախչիլ ... ու յոգնած եկայ հասայ հոս: Եթէ ուղիղ չէ ըսածս՝ ապտակ մը ինծի:

Դաշիր. — Ա՛յ, վա՛յ ինձ, եւ այս բոլորը քու պատճառաւ:

Դիմարս. — Բայց ինչպէ՛ս, միթէ՛ յանցանքը ի՞մօ է:

Դաշիր. — Ի՞նչպէս թէ ոչ.

Դիմարս. — Յայտնի՛ է: Բայց ի՞նչ փչեց խելքիդ, վտանգաւոր նամակներ դնել իմ վերնազգեստիս գրպանին մէջ:

Դաշիր. — Ի՞նչպէս թէ քու կդ:

Դիմարս. — Իմօ՛, այո՛, իմօ: Միթէ՛ տարակուսի տակ կ'ուզես ձգել զայն:

Դաշիր. — (ինքիւրմէ դուրս ելած) Ո՛հ. զնա՛ կորսուէ՛ (կ'ուզե մեկնիլ):

ՏԵՍԻԼ ՔՍԱՆԵՐԵՔԵՐՈՐԴ

ՌՈՒՐԷՆ և՛ ԱՄԷՆՔԸ

- Ռուշրէն. — (կը հանդիպի Գաւիթի) Ներեցէ՛ք :
 Գաւիթ. — Ոչինչ :
- Ռուշրէն. — (բոլորովին քրտնած է : Հագիւ
 մտած՝ գլխարկը կը հանեմ, և ձախատին բըր-
 տինքը կը սրբեմ ըսելով Գեղամին) Ա՛հ. վեր-
 ջապէ՛ս գրեզ կը գանձեմ :
- Գեղամ. — Եւ ուրեմն :
- Ռուշրէն. — Բոլոր քաղաքը շրջեցայ :
- Գեղամ. — Ուրեմն, ուրեմն :
- Սուշրէն. — Խօսէ՛ :
- Ռուշրէն. — (դժուարութեամբ կը խօսի, որով-
 հետեւ տազնապած է) Պ. Ոստիկանապետը ...
- Սուշրէն. — Ծա՞նր է :
- Գեղամ. — Ի՞նչ կ'ըսէ :
- Գաւապար. — Ի՞նչ կ'ուզէ :
- Ռուշրէն. — (չանք ընկող) Շուտ մը գրեզ տուն
 կը կանչէ ... կարելոր կարգադրութիւններ
 կան ընելիք Ասպետ Սուրէն Ոստիկանապետին
 հասնելուն համար ...
- Առեկըրը { Տխմա՛ր
 Ապուշ
 Անմիտ
- Դիւնարս. — Ա՛հ, ա՛հ, ա՛հ, ա՛հ :
- Ռուշրէն. — քատերաբեմին մեջտեղն : Էլատա-
 կերգօրէն վար կը ձգեմ իր գտակը, բաշկիւնակը
 և անշարժ, բերանարաց, աչքերը դուրս ըն-
 կած, ապշած կը նայի՝ ներկայ եղողներուն,
 չկրնալով մեկնել այնչափ աղճուշկին պատ-
 ձառը, իրեն այնքան բնական երեւցած իրի
 մը համար) :

ՊԱՆՏԱԼԷՈՆԻ ՀԱՇԸ

ԿԱՄ

ԱԿԱՆՋԻ ԿԵՐԱԿՈՒՐԸ

ԿԱՏԱԿԵՐԳՈՒԹԻՒՆ

ՄԷԿ ԱՐԱՐՈՒԱԾՈՎ,

ԹԱՐԳՄԱՆԵՑ

Հ. Յ. Վ. ՏԻՐՈՅԵԱՆ

Ա Ն Ձ Ի Ն Ք

ԲԵՆԻԿ. Ծաղարար, գործէ քաշուած:

ՊԱՂՏԻԿ. Ոսկերիչ, վաղեմի բարեկամ Բենիկի:

ՊԱՆՏԱԼԷՈՆ. Ծառայ Բենիկին:

ՈՍՏԻԿԱՆ ՄԸ:

ԶԻՆՈՒՈՐՆԵՐ:

ՆԱՄԱԿԱԲԵՐ ՄԸ:

Տեսաբանը Բենիկի տունը կը կատարուի. —
Բեմը կը ներկայացնէ սենեակ մը պարզօրէն կա-
հաւորուած:

Տ Ե Ս Ի Լ Ա Ռ Ա Ջ Ի Ն

Պ Ա Ն Տ Ա Ղ Ո Ն միայնակ

Պանտարկոն. — (Ներս կը մտնէ ձեռքը գաւազան մը, զոչգ մը ակնոց և կեղծամ մը, զորս սեղանի մը վրայ կը դնէ. կը ծռի իր տիրոջ կենդանագրիկն առջև ողջունելով զայն, որ կողմնակի՝ պատեն կախուած կ'ըլլայ):

Ո՛հ. տէր իմ, վաղը քու տօնդ է և դու անոր վրայ բնաւ բան մը չես ըսեր ինծի. բարեբախտաբար տօնացոյցը մէջ տեղ է, որուն մէջ կը տեսնուի թէ այսօր Ս. Բենեդիկտոսի տօնին նախօրեակն է: Բայց իրեն այս լուռութիւնը պէտք չեմ գէշի մեկնել, վասն զի զինքը շատ կը սիրեմ: Եւ որովհետեւ տաս տարիէ ի վեր որ իր ծառայութեան մէջ եմ, երբեք չեմ պակսեր իր տօնի օրն նուէր մ'ընելու իրեն, նա վախուսի որ այս տարի ալ նոյն աւանակութիւնը կ'ընեմ, ուստի կը ջանայ՝ իմ քսակիս խնայութեան համար, այդ օրն լուռեամբ անցնել տալ... բայց ի զուր, սիրտս վկայեց և ինքնածին է այն բանը որ հաճոյքով կը կատարուի:

Սակայն իրեն հակառակ չընելու համար, այնպէս կարծել կու տամ իրեն որ ես բան մը չեմ գիտեր և մի միայն վերջի վայրկեանին կը նուիրեմ իրեն փողոսկրէ այս գաւազանը, այս կեղծամը և այս ակնոցները: Բայց, ինչո՞ւ համար ուրեմն, նա որ բնաւ դուրս չելլեր առանց ինծի ըսելու, «Պանտալէոն, դուրս պիտի ելլեմ, եթէ մէկը գայ, պիտի ըսես որ ես ժամը երկուքին կը դառնամ ճաշելու համար»։ Ինչո՞ւ ուրեմն այս առաւօտ նա զաղտուկ մեկնեցաւ

տունէն, առանց գոնէ կանչելու զիս որ իր փողպատը կապեմ և վրան վրձինեմ, ինչպէս միշտ կ'ընէ: Այս կամ թէ ա՛յն ըլլայ անոր պատճառը, այս ժամուս ո՛չ մէկը և ո՛չ միւսը կրնայ ըլլալ: Ուրեմն ո՞ւր գնացած պիտի ըլլայ: (Կը շուռի անցքին մէջ Բենիկին երգելու ձայնը): Բայց պիտի գիտնամ զայն, և ահա՛ ինքը... Պահենք զասոնք շուտով որ և է տեղ մը:

ՏԵՍԻԼ ԵՐԿՐՈՐԳ

ՊԱՆՏԱՆՆԵՆ յետոյ ԲԵՆԻԿ՝ իր վերարկուչին տակ ծրար մը բերելով:

Բենիկ. — (Կը մտնէ երգելով):

Պանտ. — Միշտ զուարթ ես, տէր իմ:

Բեն. — Միշտ, մանչուկս, և չեմ գիտեր թէ ինչո՞ւ համար այսօր սովորականէ աւելի զուարթ եմ:

Պանտ. — (մեկուռսի) Ես լաւ գիտեմ անոր պատճառը. (բարձր) կան այնպիսի օրեր...

Բենիկ. — Եւ ստուգիւ ինչո՞ւ համար տխուր պիտի ըլլամ: Ասկէ տասնևութ ամիս առաջ երբ ժառանգութիւն ստացայ հօրեղբօրմէս, քաշուած եմ իմ ծաղարարի արուեստէս, գրեթէ...

Պանտ. — Գրեթէ տասմուկ ամիս:

Բենիկ. — Ի՞նչպէս ըսիր:

Պանտ. — Գրեթէ տասմուկ ամիս:

Բենիկ. — Պանտալոն, սիրելիս, զգուշացի՛ր վըտանգաւոր սղումներէ:

Պանտ. — Զա՛րմանք, ըսածէ՞ք բան մը չեմ հասկնար:

Բենիկ. — Ընդհակառակն ես շատ բան կը հասկնամ և այդ ինձի բաւական է:... Արդ կ'ը-

սէի թէ գրեթէ տասն և մէկ ամիս կ'ընէ քաշուած եմ առուտուրէս:

Պակտ. — Այո՛, այո՛ տէր իմ տասմուկ ամիս:

Բենիկ. — Կուզեմ ըսել թէ մաքիս առաջ բերելով բոլոր այն շատակերներուն ցաւը, անոնց զիս փնտռելը. և ապա ներքսապէս միւթթարուած ըլլալս՝ թէ ունիմ տանս մէջ խնայող, աշխատասէր և հաւատարիմ ծառայող մը, ի՞նչպէս չըլլամ ուրախ և երջանիկ ինծի տարեկից մարդոց մէջ:

Պակտ. — Զեր ազնուութիւնն է, տէր իմ, այդպէս ըսել տուողը: Միւս կողմանէ ստոյգ է, ուրախութիւն և քաջողջութիւն երջանկութիւն կը բերեն: Սակայն ներեցէք տէր իմ, որ զիս սփոփելու համար այս հարցումն ընեմ ձեզի, թէ ի՞նչ է պատճառը որ դուք այս առաւօտ դուրս ելաք առանց ինծի ըսելու թէ որո՞՞ն, ո՞ւր և ինչո՞ւ համար:

Բենիկ. — Ի՞նչ կուզես. օգը գեղեցիկ էր, ես լաւ տրամադրութեան մէջ էի, զնացի պտոյտ մ'ընելու գետեգերքը, տեսնելու ջուրին վազքը, և այնքան ախորժս բացուեցաւ որ...

Բենիկ. — Կեցիր, նախ և առաջ ըսէ ինծի թէ կրնա՞ս գուշակել արդեօք թէ ինչ ունիմ վերարկուիս տակ ծածկած:

Պաղտիկ. — Վերարկուիդ տակ, թէ չեմ սխալիր, ըսեմ ահա: Կայ հնդկահաւ մը մեծ, պարարտ, հնդկահաւ մը գիրապարար:

Պակտ. — Ո՛հ, հիանալի՛ կենդանի... և փորն ալ լեցուած... սուղի նստած պիտի ըլլայ ձեզի, տէր իմ:

Բենիկ. — Ոչ. որովհետեւ ձեռքէ առնուած հընդկահաւ մ'է, սեղանադիրէ մը զնեցի զայն. մարդ մը որ պարզև առած պիտի ըլլայ՝ այսօր մեծ խրախճան մ'ընելու համար, բայց երէկ կաթուածով մը մեռած է:

Պակտ. — Կ'երևի թէ այդ մեռած մարդը զուարճասէր մէկն էր:

Բեկիկ. — Գնա՛ շուտ մը զայն եփէ:

Պակտ. — Մեռեա՛լը:

Բեկիկ. — Է՛հ, ո՛չ, հնդկահաւը:

Պակտ. — Բա՛, ուրեմն հիւրեր պիտի ունենանք:

Բեկիկ. — Եւ ո՛չ իսկ կատու մը:

Պակտ. — Եւ սակայն կսկիծ է ասիկա միայնակ ուտելը. գոնէ վաղուան սպասեցէք:

Բեկիկ. — Ա՛հ ստոյգ է, բայց ես ապահով չեմ որ վաղը այնչափ ախորժ ունենամ որչափ այսօր, և յետոյ ուրիշ կերպով...

Պակտ. — Այն պարագային, կեր անուշ բրէ կենդանին:

Բեկիկ. — Այո՛. ուտենք զայն:

Պակտ. — Բայց եթէ մարդիկ պիտի հրաւիրուին, ժամանակն է հրաւէրը զրկելու:

Բեկիկ. — Այո՛. վասն զի կէսօրն անցեր է.

Պակտ. — Պէտք է երթալ ամենէն մօտիկ զբանուողին:

Բեկիկ. — (սա՛ն մը մտածելի ետքը): Այո՛, ամենէն մօտին, իրաւունք ունիս:

Պակտ. — (փնտռելով): Այդ պարագային անեկայ է պարոն...

Բեկիկ. Ոչ, պարզ ծառայ մ'է ինծի ծանօթ:

Պակտ. — Ո՛հ, ո՛հ, ծառայի՛ մը կ'ընէք հրաւէրքի պատիւը:

Բեկիկ. — Եթէ դու թոյլ տալու ըլլաս:

Պակտ. — Եւ ո՞վ է այդ ծառան:

Բեկիկ. — Անիկա Պանտալէոն կը կոչուի, դու կը ճանչնաս զինքը:

Պակտ. — (բորբոսովիւ շփոքած): Ի՛նչ, տէրիմ, է՞ս եմ:

Բեկիկ. — Այո՛, զքեզ կը հրաւիրեմ. ամենէն աւելի մօտը դու չե՞ս:

Պակտ. — Մի՛ ծաղրէք զիս այդ կերպով:

Բեկիկ. — Ստոյգ կ'ըսեմ որ քեզ կը հրաւիրեմ:

Պակտ. — Չե՞ր սեղանին:

Բեկիկ. — Այո՛, իմ սեղանիս. դու տասը տա-

րի անթերի ծառայեցիր ինծի, և ես կուզեմ
այս փոքրիկ փոխարինումն ընել քեզի:

Պակտ. — Լաւ ուրեմն, ճիշտ է, այս բանս ինծի
ալ աւելի հաճոյ է քան այն ամէնը որ պիտի
կարենայիր տալ ինծի: Բայց, արդեօք դուք
չէ՞ք խաբեր զիս... եթէ յանկարծ մէկը ճա-
շին վրայ հասնի, ի՞նչ պիտի ընեմ:

Բենիկ. — Դու մէկէն ոտքի կ'ելլես, ուրիշ ճար
չի կայ: Օ՛ն ուրեմն, վազէ՛ փութով խոհանոց,
և հոգ տար որ ճաշը լաւ ըլլայ:

Պակտ. — Վստահ եղիք, ձեզի արժանի լաւու-
թեամբ, և այս քիչ բան ըսել չէ:

Բենիկ. — Մի՛ մոռնար իմ սիրած կերակուրս...
կը հասկնամ... տասկած ականջը, ինչպէս
երէկ չէ միւս օր:

Պակտ. — Հասկցայ. (դուրս կ'երդէ):

ՏԵՍԻԼ ԵՐՐՈՐԳ

ԲԵՆԻԿ, միայն:

Այս խեղճ ծառան, նա գո՛հ է... Ա՛հ. եթէ միտքը
գար որ վաղը իմ տօնս է, բոլորովին տար-
բեր բան պիտի ըլլար. բայց, սակայն կրնայ
զայն գուշակել. վասն զի իր պարզութեանը
մէջ արթնամիտ է: Պիտի ցաւէի անոր վրայ,
որովհետեւ ինքզինքը պարտաւոր պիտի համա-
րէր ինծի ընծայ մը ընելու, ինչպէս որ մին-
չև օրս ըրած է, և ահա այս բանս է որ չեմ
ուզեր բնաւ:

Այ, այ, մէկը դրանս առջև կանգ առաւ: Տես-
նենք չեմ սխալիր, բարեկամ Պաղտիկն է: Ո՞ր
ծակէն դուրս կ'ելլէ որ երկու տարիէ ի վեր
ես զինքը չեմ տեսած: Պողիտէ՞ն կու գայ, իմ

տօնս շնորհաւորելու համար, ասիկա ազնուութիւն մը պիտի ըլլայ իր կողմանէ: Բայց եթէ կու գայ ինծի սեղանակից ըլլալու, ասիկա մեծապէս պիտի խոռվէ Պանտալէոնի գործերը: Ո՛չ, ո՛չ, ես իրեն խոստացայ, խօսքս պիտի պահեմ, մենք դէմ առ դէմ պիտի ճաշենք: Ահաւասիկ Պաղտիկ. լռենք.

ՏԵՍԻՆ, ՉՈՐՐՈՐԳ

ԲԵՆԵԿ և ՊԱՂՏԻԿ

Պաղտիկ. — Է՛հ, ահա հոս եմ, իմ սիրելի Բենիկոս, կը վախէի թէ մի՞ գուցէ բացակայ ըլլաս: Ողջագուրենք զիրար:

Բենիկ. — Բոլոր սրտովս, բա՛բէ:

Պաղտիկ. — Ազէկ միտքս ընկաւ, դու կը ճանշնաս իմ թորոս հօրեղբայրս:

Բենիկ. — Ի՞նչ կայ որ:

Պաղտիկ. — Մեռաւ նա:

Բենիկ. — Ո՛հ, թաղէոս իմ հօրեղբայրս ալ:

Պաղտիկ. — Վա՛խ, ե՛րբ արդեօք:

Բենիկ. — Ասկէ տասնևութ ամիս առաջ:

Պաղտիկ. — Տասնևութ ամիս առաջ: Ահա ճիշտ տասնևութ ամիս կ'ընէ որ ես կ'ազօթեմ իմ սիրելի վախճանելոյս համար:

Բենիկ. — (Ժիծաղելով) Ո՛հ, ծիծաղեցուցի՛չ է, մի և նոյն տարին:

Պաղտիկ. — (Ժիծաղելով). Արդարև ի՞նչ զարմանք. երբ մահը պատահի...

Բենիկ. — Այս կերպով դու ալ ինծի նման ժառանգ ես:

Պաղտիկ. — Աստուած իմ, այո՛: Բայց, բարեկամս, երբ երեսունըհինգ տարի ապրած կ'ըլ-

լաս անձի մը հետ զոր կը սիրես, ո՛րքան դը-
ժուար է անկէ բաժնուիլը, և միայնակ զըտ-
նուիլ մէկ օրէն միւսը, վասն զի երկուքս ալ
մեր սիրելի հօրեղբայրներուն հետ կ'ապրէինք:

Բենիկ. — Ի՞նչ կրնաս ընել. պէտք է շնորհա-
կալ ըլլալ Աստուծոյ ամէն բանի համար: Ա՛հ,

լաւ միտքս եկաւ, ապա քու ոսկերչութի՞ւնդ:

Պաղտիկ. — Ա՛լ վերջացուցեր եմ անիկա, սի-
րելիս. հօրեղբայրս հիմնեց այն վաճառատունը

և ինքը սիրուած էր բոլոր յաճախորդներէն:

Բենիկ. — Վերջապէս թո՞ւ մը և հօրեղբայր մը
յաւիտեանս իրարու հետ ապրելու չեն:

Պաղտիկ. — Ստոյգ է, պէտք է որ մէկը կամ
միւսն սկսի:

Բենիկ. — Լաւագոյն է որ անիկա հօրեղբայրն
ըլլայ:

Պաղտիկ. — Այս պարագային մէջ, ձեռքդ տո՛ւր
և մխիթարուինք իրարմով:

Պաղտիկ. — Սիրով: Այսօր ի՞նչ կ'ընես դու:

Բենիկ. — Թէ ի՞նչ կ'ընեմ:

Պաղտիկ. — Այո՛, ո՞ւր պիտի ճաշես:

Բենիկ. — (մեկոշսի) Ծածկեմ իրմէ, ասիկա
Պանտալէոնի հաշուին չի գար:

Պաղտիկ. — Չե՞ս յիշեր թէ ուր կը ճաշես:

ՏԵՍԻՆ, ՀԻՆԳԵՐՈՐԳ

Նոյներն, ՊԱՆՏԱՆԻՈՆ

Պանտ. — (առանց Պաղտիկը տեսնելու), Ըսէ՛,
ուրեմն, տէր իմ, ես չեմ գիտեր թէ ինչպէս
պիտի եփուի փորը լեցուած հնդկահաւը:

Պաղտիկ. — (մեկոշսի) Փորը լեցուած հնդկա-
հաւ մը:

Բեկիկ. — (մեկուսի) Ո՛հ, յիմարը:

Պակտ. — Այս առաջին անգամն է որ ինծի կը պատահի այսպիսի բան մը, և ահա ժամանակ ալ չկայ:

Պաղտիկ. — Դու իրաւունք ունիս, բարեկամ, գիրար մխիթարենք, ևս այսօր քովէդ չեմ հեռանար:

Պակտ. — (մեկուսի) Ա՛յ թշուառութեանս, պէտք չէի իմացնել:

Բեկիկ. — (մեկուսի) Ա՛լ փախուստի հնարք չկայ:

Պաղտիկ. — Ժամը քանիի՞ն կը ճաշես դու:

Բեկիկ. — Ղիշտ ժամը երկուքին:

Պաղտիկ. — Ժամը երկուքի՞ն:

Բեկիկ. — Այո՛. վաղեմի սովորութիւն մ'է, և և ևս զայն լաւ կը գտնեմ:

Պաղտիկ. — Կրողը տանի. ևս ժամը երկուքին, հոս մօտերը՝ ժամադրութիւն մ'ունիմ ընելիք գործի պատճառաւ, որ նոյն իսկ գլխաւոր նիւթն է իմ ուղևորութեանս, և ևս ժամը չորսին միայն կրնամ ազատ ըլլալ:

Բեկիկ. — Ի՛նչ, ժամը չորսի՞ն:

Պակտ. — (մեկուսի) Ժամը չորսի՞ն, ի՛նչ լաւ:

Բեկիկ. — Չախորդ բան:

Պաղտիկ. — Բայց, դու շատ լաւ կրնաս ինծի համար կանոնի փոքր բացառութիւն մ'ընել:

Պակտ. — Ա՛հ, իրաւունք ունիս. եթէ տէրս ուզէ ութ օր անկողին մնալ, կրնայ այդ բանը ընել:

Բեկիկ. — Իրաւունք ունի նա, արդէն սուղի նստած են ինծի այդ մարդահաճութիւնները: Կը հասկնաս դու թէ ինչ է վարժութիւնը մեր հասակին մէջ. ճիշտ այնպէս է երբ հարկ ըլլար որ ուրիշ սեղանի մը վրայ ճաշէի, կամ թէ իմ սովորած տեղէս դուրս տեղ մը նստէի, իմ ճաշս պիտի վնասէր ինծի:

Պաղտիկ. — Ա՛լ ըսելիք չունիմ: Բայց ինչո՞ւ համար այս տխմարը կ'իմացնէ ինչ որ ունիս:

Պակտ. — Մեծապատիւ պարոն, ես չէի գիտեր որ դուք հոն կը գտնուէիք, առանց ասոր...:

Բենիկ. — Ե՛հ, հերն անիծած. վաղը առաւօտ եկուր ճաշելու, դեռ մնացորդ կը գտնուի անկէ, և դու տոտիկ մը կամ թեի մը կրծօն կ'ունենաս:

Պաղտիկ. — Շատ լաւ, թող այդպէս ըլլայ:

ԵՐԳ.

Առ վաղիւ, վաղիւ, վաղիւ
 Էգոց կանուխ վաղուին
 Քեզ կը յանձնենք քոյ բաժին
 Առ վաղիւ վաղիւ, վաղիւ
 Խորովածն հնդկահաւին
 Պատառն այն վերջին:
 (Պաղտիկ կը մեկնի):

ՏԵՍԻԼ ՎԵՑԵՐՈՐԳ

ԲԵՆԻԿ, ՊԱՆՏԱՆԷՈՆ

Պակտ. — Ա՛հ. վերջապէս մեկնեցաւ... շատ վախցոց գիտ:

Բենիկ. — Խա՛չ որ. քիչ մնաց քու տեղդ կը գրաւէր:

Պակտ. — Աքանչելի՜ սեղանակից մը պիտի ունենայիք, տէր իմ:

Բենիկ. — Ուրեմն դու աւելի՞ հաճելի կը համարես զքեզ:

Պակտ. — Ոչ. բայց ես զձեզ աւելի կը սիրեմ, և թէ ձեր գիրուկ հնդկահաւը չէ որ ինծի աւելի հաճոյք պիտի պատճառէ ձեզի սեղանակից ըլլալու: Բայց ներեցէք, տէր իմ, հարկ է որ երթամ քիչ մը զարդարուիմ:

Բենիկ. — Ի՛նչպէս, կրողը տանի, զարդարուի՛լ:

Պակտ . — Բան, զարդարուելու այս առիթն ստէպ չի պատահիր ինձ: Պիտի հազնիմ թաւիչէ տաբատս որ վեց տարի առաջ ինձի տուիք, յետոյ պիտի կապեմ եղջիւրաւոր դեղին փողպատ մը, պիտի հազուիմ բաց խնձորագոյն հազուստ մը, գինդաւոր կօշիկներս և փողպատիս վրայ ալ պիտի դնեմ հնդկահաւ զնտասեղս (կը մեկնի):

ՏԵՍԻԼ ԵՕԹՆԵՐՈՐԴ

ԲԵՆԻԿ, միայն

Ես ալ կ'երթամ կտորիկ մը զարդարուելու. իր տօնին օրը ներելի է քիչ մը արդուզարդը (կը մտնե իր սենեակը: Տեսարանը դատարկ կը մնայ, և կը շուռի փողպատաբարձն մը փողոցին մեջ):

ՏԵՍԻԼ ՈՒԹԵՐՈՐԴ

ՊԱՆՏԱՆԷՆՆ, և ԲԵՆԻԿ

Պակտ . — (խոհանոցին մեջ). Բենիկ (իր ննջասենեկին մեջ, այնպէս որ քստերաբեւը բռշորովին դատարկ է):

Բենիկ . — (առանց տեսնուելու): Ըսէ՛ ուրեմն, Պանտալէոն:

Պակտ . — (նոյնպէս) Հրամեցէք, տէր իմ:

Բենիկ . — Ի՞նչ է այդ երաժշտութիւնը:

Պակտ . — Ասիկա ինձի կ'երևայ՝ ցայգերգ մ'է որ ձեզի կը նուիրուի:

Բենիկ. — Գնա՛, նայէ՛ ուրեմն:

Պակտ. — Ես չեմ կրնար, շամփուրը կը դարձնեմ:

Բենիկ. — Ես ալ ածիլուելու հետ եմ:

ՏԵՍԻԼ ԻՆՆԵՐՈՐԴ

Նոյներն, ՊԱՂՏԻԿ

Պաղտիկ. — (միայն) Բա՛խտ մ'է իմ ծանօթիս հիւանդ ըլլալը. որով մեր ժամագրութիւնը վաղուան մնաց, և հետեւաբար այլ ևս արգելք չկայ ճաշ ընելուս իմ Բենիկ բարեկամիս հետ: Բայց ս'ը է նա:

Պակտ. (խոհանոցին մէջ): Ուրեմն լսեցէք, տէր իմ, անոնք կ'ըսեն թէ ձեր տօնն է:

Բենիկ. — Ի՞նչ տօնս. բարի:

Պակտ. — Ճիշտ է... Մարտի 20ը, նախատօնակն է 21ին:

Պաղտիկ. — Իր տօնն է, ասիկա սքանչելի հանդիպում մ'է. լո՛ւռ: Երթամ իրեն ծաղկէ փունջ մը փնտռեմ, և ճիշտ ժամը երկուքին՝ վրայ հասնիմ իբրև պատահմունք մը: Ո՛հ, գեղեցիկ անակնկալ մը. (կը մեկնի):

ՏԵՍԻԼ ՏԱՍՆԵՐՈՐԴ

ԲԵՆԻԿ, ՊԱՆՏԱԼԵՈՆ

Պակտ. — (Բենիկի առջև կրկնով քր իր սենեկէն դուրս կոչ գայ, հագուած՝ առանց կեղծեղծ Ոստի.

- ժամի): Ներեցէք, տէր իմ, որ ես ձեզի շնորհաւորութիւն ընեմ. բիւր մաղթանքներ:
- Բեկիկ. — Շնորհակալ եմ, բայց զբաւի կուգամ, չարածնիկ, որ այդ ցալգենուազը քու կողմանէդ էր:
- Պակտ. — Այո՛. տէր իմ:
- Բեկիկ. — Գիտես սակայն որ այս բանս ինձի հաճոյ չէ, բայց կը խնդրեմ որ զոնէ ուրիշ խենդութիւններ չընես: Անցեալ տարի դու ինձի տուիր զոյգ մը անզգիական անելի, առաջի տարին հայլիաւոր եպենոսէ վրձին մը: Ալ չեմ ուզեր ասոնց նման ոչ մէկ բան:
- Պակտ. — Այս անգամ կրնաք ապահով ըլլալ, վասն զի ես ոչ ինչ կրնամ տալ ձեզի փոխարէն այն պարզեին որ դուք ինձի կ'ընէք, թոյլ տալով ինձ որ ձեզի հետ ճաչեմ:
- Բեկիկ. — Աւելի աղէկ, տղաս, վասն զի իմ գիտաւորութիւնս քեզի հաճոյք ընել էր:
- Պակտ. — Այս պարագային, կրնաք պարծենալ որ ձեր նպատակէն չէք վրիպած, ստուգու:
- Բեկիկ. — Ժամը քանի՞ է, կրողը տանի. երկուքին քառորդ կայ:
- Պակտ. — Արդէ՛ն իսկ. շուտ սեղանի սպասները, վասն զի կը վախեմ որ չըլլայ թէ յանկարծ վրայ հասնի կախերես մը որ զիս խոհանոց դրկէ, ինչպէս եղաւ քիչ առաջ (կ'երբայ Պակտայեռն կերակոչըր բերելու):
- Բեկիկ. — Ահաւասիկ սիրած ճաշս, միամտութիւն, անկեղծութիւն և զուարթութիւն, շիտակն ըսելով, այս բանս միայն զիւղի մէջ կրնամ ունենալ:
- Պակտ. — (ձաշը բերելով) Ահաւասիկ ինչ որ եղաւ, գեղեցիկ երևոյթ ունի, է՛հ: Ոսկեզօծուած չէ՛ մի:
- Բեկիկ. — Ի՛նչ անուշ հոտ: Փութանք սեղան նստիլ:
- Պակտ. — Նախ դուք... ան, տէր իմ, ձեզմէ վերջ:

Բենիկ. — (զուարթացած) Շատ աղէկ, ահա հոս եմ. ի՞նչ շիտթած դէմք ունիս... Շարժէ՛ առանց քաշուելու:

Պակտ. — Պիտի նստիմ... բայց համարձակութիւն չունիմ, այս առաջին անգամն ըլլալով...

Պաղտիկ. — (դրսկն) Ահաւասիկ եմ, ահաւասիկ:

Պակտ. — Ողորմած Տէր:

Բենիկ. — Ի՛նքն է:

Պաղտիկ. — Անձեռոց մ'աւելի:

Պակտ. — Բարկութենէս կը ճաթիմ...

Բենիկ. — Փութա՛ ոտք ելլել:

Պակտ. — Զիզերս թուլցած են, ոյժ չմնաց վրաս:

Բենիկ. — Պէտք է սակայն ոտք ելլես: Ահաւասիկ... շուտ ըրէ:

Պակտ. — (ոտք ելլելով) Հիւանդութիւն մը պիտի գայ վրաս ապահովապէս:

ՏԵՍԻԼ ՏԱՄՆԸՄԷԿԵՐՈՐԴ

Նոյներն, ՊԱՂՏԻԿ

Պաղտիկ. — Վերջապէս, ահա եկայ բարեկամ, բնաւ չէիր սպասեր. այնպէս չէ՞ մի:

Բենիկ. — Բնաւ, կը խոստովանիմ զայն:

Պակտ. — (մեկուսի) Իբրև թէ մեծ բան մ'ըրաւ:

Բենիկ. — Ապա քու ժամադրութիւնդ:

Պաղտիկ. — Վաղուան ձգուեցաւ, ոսկերիչս ջերմի մէջ է:

Պակտ. — (մեկուսի) Ո՛ւր էր թէ ջերմը գրեզ բռնէր:

Պաղտիկ. — Ապուրը լեցուած է և անձեռոցս

ալ դրուած, ուրեմն դու ինձ սպասեցիր: Հիւ-
նալի է, հիանալի. հապօ՛ն սեղան նստինք:
Պանտ. — (մեկոշախ. դուռը ելլելով) Եւ ես
դէպ ի խոհանոց. Ահ. եթէ կարենայի հնարք
մը գտնել... Պէտք է փնտռել:

ՏԵՍԻԼ ՏԱՄԵՐԿՈՒԵՐՈՐԴ

ԲԵՆԻԿ, ՊԱՂՏԻԿ

Պաղտիկ. — (ցոյց տալով ձեռքը բռնած փուռնչը)
Բայց ամէն բանէ առաջ, սիրելի բարեկամ,
թո՛ղ տուր որ նուիրեմ քեզի երկու վարդերէ
կազմուած այս փուռնչը, որ խորհրդաւոր պատ-
կերն է մեր մէջ եղած վաղեմի բարեկամու-
թեան: Արդարև բազդ մ'է ինձ համար հոս
գտնուիլս այսօր. խորապէս զգածուած եմ և
երջանիկ կը համարիմ զիս, բարենշան տօ-
նախմբութեանդ առթիւ կարենալ քեզ յայտնե-
լու իմ սրտիս անկեղծ մաղթանքները: Անմուտ
ըլլայ կեանքիդ արևը, միշտ պայծառ, միշտ
չողչողուն, կեցցես յաւէտ, կեցցէ մեր բարե-
կամութիւնը:

Բենիկ. — (յուզուած) Կարծեմ կամաց կամաց
իրաւունք պիտի տամ Պ. Պաղտիկին, Պան-
տալէոնին տեղը բռնած ըլլալուն համար:

Պաղտիկ. — Ի՛նչ ունիս, դու կու լա՛ս:

Բենիկ. — Այո՛. երկու վարդերէ կազմուած
փուռնչդ որ խորհրդանիշ մ'է մեր երկուքին
բարեկամութեան, զիս բոլորովին կը յուզեն
... հոս սպասէ ինձի:

Պաղտիկ. — Ո՞ւր կ'երթաս:

Բենիկ. — Պէտք չէ՞ արդեօք գինիով թրջել քու
փուռնչդ...: Պանտոլէոն:

ՏԵՍԻԼ ՏԱՍՈՒԻՐԵՔԵՐՈՐԴ

Նոյներն, ՊԱՆՏԱԼԵՈՆ

Պակտ. — (տխրոքեակներ) Ի՞նչ բանի պէտք ունիս, տէր իմ:

Բեկիկ. — Գինեատուն իջիր, կը դառնաս աջ կողմդ և լուսամտին ձախ կողմը, պիտի տեսնես երեք շիշերու վրայ գրուած պիտակ մը...

Պակտ. — Բայց, տէր իմ, ես կարգալ գիտեմ:

Բեկիկ. — Ո՛հ, ստոյգ է, լաւ պիտի ըլլայ որ ես իջնեմ, որով անձամբ կ'ընտրեմ գինին և այսպէս աւելի ապահով կ'ըլլայ գործը:

Պաղտիկ. — Ի՞նչպէս, աւելի ապահով... Ա՛հ. կը հասկնամ:

Բեկիկ. — Դու պիտի հաւնիս անոր:

Պաղտիկ. — Գնա՛, գնա՛ քանի որ կ'ուզես, տանդ մէջ ես. ըսելիք չունիմ:

Բեկիկ. — Թո՛՛, ահա սքանչելի մարդեր, ասկէ հրամայեցք մինչև որ լաւագոյնը բերեմ:

ՏԵՍԻԼ ՏԱՍՆԸՉՈՐՍԵՐՈՐԴ

ՊԱՂՏԻԿ, ՊԱՆՏԱԼԵՈՆ

Պակտ. — (մեկուշի, մինչ Պաղտիկ կը խմէ): Ահա առանձին ենք... Եթէ իմացնեմ իրեն մտքիս մէջ ծնած գաղափարը... բայց նա ինծի պիտի չհաւատայ... բա՛հ, լաւագոյն է միշտ փորձելը... կ'ըսեն թէ ծերերը ամէն բանի կը հաւատան... պէտք է նայիլ թէ պիտի կըլլէ:

Պաղտիկ. — (գիւնի խմելով) Մինչև առաւօտ
պիտի կոնծէի այս գինին:

Պակտ. — (խորհրդաւոր կերպով մը): Պարոն,
առանց կատակի, իրաւցնէ կ'ուզէ՞ք իմ տիրոջ
հետ ճաշել:

Պաղտիկ. — Անտարակո՛յս:

Պակտ. — Ուրեմն, դուք աւելի՛ քաջասիրտ էք
քան ուրիշ ամէնը:

Պաղտիկ. — Քաջասիրտ, ինչո՞ւ:

Պակտ. — Վասն զի պէտք է քաջասիրտ ըլլալ...
ահաւասիկ... Շատ տարի է որ դուք տեսած
չէիք խեղճ պարոն Բենիկը:

Պաղտիկ. — (նկատնակ գործաւցած և յետոյ
վախցած): Երկու տարի կար...

Պակտ. — Այն ատեն չեմ գարմանար. ահա
տասնըութ ամիսէ ի վեր է որ զինքը բըռ-
նած է.

Պաղտիկ. — Ի՞նչ բան զինքը բռնած է, ի՞նչ
կայ...

Պակտ. — Ո՛հ. այո՛... Ի՞նչ, եթէ ուզէի այս
գիշեր սոկից վտարուիլ՝ ձեզի կ'ըսէի անիկա:
Կը բաւէ ձեզի սաչափ գիտնալ որ դուք եր-
ջանիկ եղած կ'ըլլաք, եթէ սոկից ելլէք եր-
թաք, ինչպէս որ մտաք:

Պաղտիկ. — Բա՛հ:

Պակտ. — Եւ եթէ ուզէիք ըսածիս հաւատք ըն-
ծայել, դեռ զինետունէն դուրս չեկած՝ դուք
կծիկը դրած կ'ըլլայիք:

Պաղտիկ. — Ես, ձգեմ փախչիմ մինչ անօթու-
թենէ կը մեռնիմ, երբ ճաշը պատրաստ է, և
երբ հնդկահաւին հոտը ամէն կողմ բռնած է:

Պակտ. — Երբ... երբ... երբ... կուզէ՞ք որ
ականջնիդ ողջ մնայ:

Պաղտիկ. — Ըսելի՞ք բան է այդ:

Պակտ. — Ուրեմն, դուք կրնաք մնաս բարով
ըսել ձեր ականջներուն... կը վստահացնեմ
զձեզ ըսածիս վրայ:

Պաղտիկ. — Դու խենթ ես:

Պանտ. — (ցած ձայնով) Ո՛չ, բայց քանի որ կ'ուզէք իմանալ՝ ըսեմ, անիկա է խենթը:

Պաղտիկ. — Պ. Բենթիկը:

Պանտ. — Այո՛, պարոն, ամէն ամիս գլխու պտոյտ ունի, ամսոյն մէկէն մինչև հինգը:

Պաղտիկ. — Այսօր ալ ամսոյն չարօն է: Ո՛հ. Աստուած իմ, ի՞նչ եղած է անոր պատճառը:

Պանտ. — Նախ և առաջ իր հօրեղբօր մահը, զոր շատ կը սիրէր և յետոյ զինին զոր չափազանց կը խմէր իր վիշտերը մոռնալու համար:

Պաղտիկ. — Սակայն այդպիսի բան մը չերևիր իր վրան:

Պանտ. — Ոչ. հիւանդութիւնը յանկարծ կու գայ վրան և այնպէս ալ կ'երթայ... նոսպայ մը ականջ մը կարելու համար, և իսկոյն կը մոռնայ: Այդ վայրկենին բացարձակապէս տապկած ականջներէ կերակուր մը կ'ուզէ, ահաւասիկ իր մոլութիւնը:

Պաղտիկ. — Մինչև հիմա շատ ականջներ կըտրած է:

Պանտ. — Բաւական մը, բայց ոչ չափազանց:

Պաղտիկ. — Ուրեմն ըսէ՛ ինձի, ինչէ՞ն կ'իմանաս անոր կարելու այդ ցանկութեան նոսպան:

Պանտ. — Նախ իր երեսի գոյնէն, որ արևու նման կը կարմրի, աչքերէն որ աստղի նման կը փայլին, և յետոյ իր դանակները սրելու ձեռն՝ աչքերը քեզի տնկած... Դուք ալ անոր փորձը պիտի տեսնէք:

Պաղտիկ. — Ա՛հ, նա դանակները կը սրցնէ՛...:

Պանտ. — (աւնկոյով երկու դանակ) Այո՛, հագիւ թէ տեսնէք անոր այսպէս ընելը, քրիք. քրաք. քրիք. քրաք. (սրնկ կը ձևացնէ) շուտ մը դէպ ի դուռ վազեցէք փախչելու, ապա թէ ոչ...:

Պաղտիկ. — Հաւատացիր, այս ամէն խորհրդածութիւններէ վերջ, կը մտածեմ...:

Պակտ. — Թողուլ զինքը որ առանձին ճաշէ, այնպէս չէ՞, ես այս խորհուրդը կու տամ ձեզի, նոպայէն ետքը կրնաք վերադառնալ հոս:

Պաղտիկ. — Այո՛, բայց այս լեցուած հնդկահաւը:

Պակտ. — Այո՛, բայց ձեր ականջները:

Պաղտիկ. — Ստոյգ է:

Պակտ. — Նախ պէտք է որ կտրէ ականջնիդ և այդ վայրկենին հնդկահաւը և դուք նոյն վիճակը կ'ունենաք:

Պաղտիկ. — Իրաւունք ունիս, ստուգիւ կը փախչիմ ես:

Պակտ. — (մեկոռնի) Ի՛նչ աղէկ, ես պիտի ճաշեմ (կը շտուի բեկիկի գալոս օճախը):

Պաղտիկ. — Ա՛լ ժամանակ չկայ:

Պակտ. — (մեկոռնի) Ա՛յ թշուառութեանս, ճաշէն պիտի գրկուիմ:

ՏԵՍԻՒԼ ՏԱՍՆՐՀԻՆԳԵՐՈՐԳ

Նոյներն, ԲԵՆԻԿ, (կողով մը գրկած)

Բեկիկ. — (երգերով ներս կը մտնէ):

Պաղտիկ. — (մեկոռնի) Ահա ուրեմն, սոսկալի վայրկեանը... կաթիլ մը արիւն չմնաց երակներուս մէջ... ապահով եմ որ երեսիօ գոյնը բոլորովին գացած պիտի ըլլայ... անիծեալ դանակը ձեռքն առաւ, կարծես հաճոյքով գայն կը շօշափէ, կատաղի նայուածք մը ուղղեց վրաս...

Պակտ. — (մեկոռնի) Լաւ է, լաւ է... վախը կը սկսի ներգործել. ազնիւ պարոն Պաղտիկը ա՛լ այնչափ չի զգար հնդկահաւին անուշ հոտը... իր տեղը ինծի պիտի թողու:

Բեկիկ. — Օ՛ն ուրեմն, պէտք չէ բնաւ խորովածը սպասցնել. գայլի ախորժակ ունիմ... փութանք ուրեմն, հրամմէ հոն, բարեկամ, ես ալ հոս կը նստիմ:

Պակտ. — (ցած Պաղտիկին) Զգոյշ եղիր իր գինիին մէջ ջուր դնելէ, կը հասկնամ, ապա թէ ոչ...

Բեկիկ. — (Պակտաղեոնին) Է՛հ ուրեմն ո՛ւր է ալանջի իմ կերակուրս որ քեզի այնչափ պատուիրեցի:

Պաղտիկ. — Այի, այի, այի:

Բեկիկ. — Ես չեմ տեսներ զայն, անիկա գուցէ հաճոյք պատճառէ Պ. Պաղտիկի:

Պաղտիկ. — Շնորհակալ եմ, շնորհակալ եմ:

Պակտ. — Հաւատացէ՛ք, տէր իմ. ժամանակ չունեցայ, պէտք է որ պարոնը հրաժարի անկէ:

Պաղտիկ. — Ահա սկսաւ մոլեգնիլ.

Բեկիկ. — Ուրեմն դուք առանց ալանջի պիտի ճաշէք, բարեկամ, բարեբախտաբար (ցոյց տալով հնդկահաշը) ահա ինչ որ քեզի պիտի փոխարինէ (կտրելով հացը) կրողը տանի քու դանակներդ... Ատոնք բնաւ չեն կտրեր:

Պակտ. — Վա՛ղը զանոնք պիտի սրցնեմ:

Բեկիկ. — Վա՛ղը. ճիշտ ալ ժամանակը գտար:

Պաղտիկ. — (մեկուշի) Ա՛լ ինձի ազատում չկայ սակէ:

Բեկիկ. — Բայց, իրարմէ մէկ մղոն հեռու ենք...

Է՛հ. երկա՛ր ժամանակ է որ զիրար չենք տեսած, քիչ մ'աւելի մօտ գանք իրարու: Ես հոս կը նստիմ (այնպիսի դիրքով կը նստի որ տեսանելի ըլլայ ժողովրդեան):

Պաղտիկ. — (մեկուշի) Քո՛վ քո՛վի՛:

Բեկիկ. — Մօտ եկուր ուրեմն:

Պաղտիկ. — Ահաւասիկ, հոս եմ:

Բեկիկ. — Դե՛ռ աւելի մօտեցիր:

Պաղտիկ. — Շնորհակալ եմ... կ'ուզեմ սեղանի վրայ թևերս ազատաբար շարժել:

Պանտ. — (մեկուշտի) Վտանգաւոր դիրքի մէջ է:
 Բեկիկ. — Քու հանգստեամբդ. խմենք (Պաղտիկ
 կ'ուզէ չոչը շեցնել ականը գաւարիկ մէջ): Մէկ-
 դի տար. գինին պէտք է անապակ ըլլայ,
 այն բարեկամութեան նման որ զմեզ կը միաց-
 նէ:

Պաղտիկ. — (մեկուշտի) Գեղեցիկ բարեկամու-
 թիւն... Ո՛ւտառած իմ, ինչպէս իր աչքերը
 կը սկսին փայլիլ:

Բեկիկ. — Ի՞նչպէս կը գտնեսդու գինին:

Պաղտիկ. — Աքանջելի՛:

Բեկիկ. — Է՛հ, ուրեմն, կրկնենք: (Պաղտիկ
 կ'ուզէ դարձեալ չոչը շեցնել ականը բաժակիկ
 մէջ): Կրո՞ղը. տանի գրեզ՝ ջուրիդ հետ:

Պաղտիկ. — Բայց այդ՝ չափազանց սլիտի տաք-
 ցընէ գրեզ:

Բեկիկ. — Աւելի աղէկ, քիչ մը գինեզուարթ
 ըլլալը մնաս չի բերեր... բայց դու չե՞ս ու-
 տեր:

Պանտ. — (մեկուշտի) Ի՞նչ աղէկ, իմ ուզածս
 ալ այդ է:

Պաղտիկ. — Կ'ուտեմ, կ'ուտեմ:

Բեկիկ. — Ո՛հ, կը հասկնամ, ախորժակդ ասոր
 համար (ցոյց կու տայ ձեռքիս հարկաւոր) կը պահես.
 (յետոյ մեկուշտի): Այո՛, Խեղճ Պանտալէոն,
 Ի՞նչպէս ալ գուարթութիւնը կտրեց:

Պաղտիկ. — (անարեկած). Ի՞նչ, կտրելո՞ւ վրայ
 կը խօսիս:

Բեկիկ. — Կրո՞ղը տանի. դու նուրբ ականջ ու-
 նիս (Պաղտիկ կը դողայ) ի՞նչպէս, կը դողա՞ս
 դու:

Պաղտիկ. — (մեկուշտի) Գտնէ միայն դողալով
 վերջանար:

Բեկիկ. — (առնելով դանակներն) Ուրեմն սկսինք
 հիմա:

Պաղտիկ. — (ձեռնակալով Բեկիկէն): Կորսուած
 եմ:

- Բենիկ. — Լ՛՛հ, ո՛ւր կ'երթաս:
- Պաղտիկ. — Բան չկայ... այս դռնէն հով կուգայ վրաս: (ցոյց տալով մէջտեղի դռուր): Հոս լուազոյն կը զգամ:
- Բենիկ. — Մտկո՛ւտ, դու ալ. (դանակները կը սրցնէ բարձրաձայն երգելով): Չաթը չութը. թրիք թրաք: Պիտի տեսնես թէ Բենիկ ինչպէս կը վարուի հիւրերուն հետ:
- Պանտ. — (ցած ձայնով Պաղտիկին) Շո՛ւտ, փախի՛ր:
- Պաղտիկ. — (ցած ձայնով Պանտալեոնին) Ա՛լ սրունքներս չեն զօրեր:
- Բենիկ. — (դանակը փորձելով) Ճիշտ ածելի մը, (ոտք կ'ելնէ): Ահաւասիկ, ի՛նչ բան կ'ուզես որ կարեմ քեզի:
- Պաղտիկ. — (փախչելով) Օգնութի՛ւն, օգնութի՛ւն:
- Բենիկ. — (ետեկն վազելով) Բա՛բէ, ի՛նչ կայ, Պ. Պաղտի՛կ, Պ. Պաղտի՛կ (Պանտալեոն խնտալէն կը ձարի): Խեղքը կորսնցո՛ւց. Պ. Պաղտի՛կ. Պ. Պաղտի՛կ (անոր ետեկն կը վազէ):

ՏԵՍԻՒ, ՏԱՍԵՆԸՎԵՑԵՐՈՐԻ

ՊԱՆՏԱՆԻՆՆ ԼԻՍՅԱՆԻ, ԼԻՇՅԱ ՏԻՃԱՊԵՐՈՎ

Ա՛հ, այո՛... տեսայ զինքը որ գողի պէս կը վազէր: Ետ դառնալու վտանգ չկայ: Ո՛հ. ի՛նչպէս աղուորիկ մը վախցուցի զինքը. է՛հ ուրեմն, ճաշը անկէ աւելի լաւ պիտի երևնայ ինծի: Ո՛վ կրնար հաւատալ, սակայն, որ տըխմար գեղջուկ մը՝ ինչպէս ես, պիտի կլլեցնէի ծեր Ռոտրիկի մը՝ ինչպէս ինքն է:

ՏԵՍԻԼ ՏԱՍՆՈՒԹԵՐՈՐԴ

ՊԱՆՏԱԼԵՈՆ, ԲԵՆԻԿ շՆՀԱՍԱԿԱՆ

Բեկիկ. — Դիւակա՞ն տարօրինակութիւն, տասնուհինգ օրուան համար շնչասպառ ըրաւ զիս:

Պաւտ. — Չկրցա՞ք հասնիլ անոր:

Բեկիկ. — Ահ, ի՞նչ ըսել է, անոր հասնիլ, կարծես խենթանոց դնելու խենթ մը կը փախչէր:

Պաւտ. — Ի՞նչ նորօրինակ ցնորք, ըսէք ուրեմն, տէր իմ, իմ բարի հրեշտակս չէ՞ որ իրեն զրկեց զայն, որպէս զի ես անոր տեղը բռնեմ սեղանին վրայ:

Բեկիկ. — Պէտք է կարծել որ... բայց, ի՞նչ փոյթ, ի վնաս իրեն եթէ խելքը կորսնցնէ. ես իմս չեմ կորսնցներ:

Պաւտ. — Սեղանը երկուքիս կը մնայ, տէր իմ:

Բեկիկ. — Ստոյգ է, իրաւունք ունիս... Սակայն եղածը զիս անհանգիստ կ'ընէ:

Պաւտ. — Բահ հին գիւնին էր որ անոր գլուխը զարկաւ, և ահա ամէն բան. խմենք եթէ հաճիր:

Բեկիկ. — Ինչ որ կ'երևի դու չես վախնար:

Պաւտ. — Վա՛խ, և ինչո՞ւ վախնամ:

ՏԵՍԻԼ ՏԱՍՆՈՒԹԵՐՈՐԴ

Նոյներն, ԹՊԹԱՔԵՐ ՄԸ

Թղթ. — Պարոն Պանտալէոն:

Պաւտ. — Ես եմ, ի՞նչ կայ ուրեմն:

Թղթ. — Նամակ մը ձեզի համար:

- Պակտ. — Ինծի համար. զարմանք... Ի՞նչ պիտի տամ քեզի փոխարէն:
- Թղթ. — Ոչինչ, պարոն, ուղեծախքը վճարուած է (կ'եղի):
- Բեկիկ. — Ես չէի գիտեր որ դու թղթակցութիւն ունիս:
- Պակտ. — Եւ ոչ ալ ես, բայց որովհետեւ ինծի կարգալ սովրեցուցած չեն, բարի կը գտնուի՞ք զայն...
- Բեկիկ. — Տո՛ւր ինծի... սակայն եթէ զաղտնիք բան մը ըլլայ մէջը:
- Պակտ. — Ինչ փոյթ, կարդացէ՛ք ինչ ալ որ ըլլայ:
- Բեկիկ. — Գնա՛ ակնոցներս բեր որոնք պատուհանին քով եղած սեղանին վրայ դրած եմ:
- Պակտ. — (մեկուշի) Ահա պատեհագոյն առիթը (բարձր) Հրամմէ. տէր իմ, ահա գոյգ մը ակնոցներ որ ձեռքիս տակ եկան, գուցէ յարմարին ձեր աչքին:
- Բեկիկ. — Ասոնք բոլորովին նոր են: Ա՛հ, Պանտալէոն, Պանտալէոն, ես խօսիւ արգիլած էի քեզի այս խենթութիւնները չընելու:
- Պակտ. — Բնդհակառակն, տէր իմ, դո՛ւք հրամայեցիք զայն ինծի ձեր սրտի մեծ բարութեամբը զոր ունիք իմ վրաս: Եւ յետոյ ա՛մէն օր տօն չէ:
- Բեկիկ. — (փորձելով ակնոցները) Աքանչելի ալ են: Այս խեղճ մանչը, կը ճանչնայ իմ ակնոցիս աստիճանը: Տեսնե՛ք (կը կարդայ) «Թագաւորական պահանորդի պաշտօնէութեան կողմանէ»: Ա՛հ, քեզի կը գրուի պահանորդաց պաշտօնէութե՞նէ մը:
- Պակտ. — Ա՛ս կը պակսէր: Ես չեմ ճանչնար, սակայն, զինուորական մարդ մը:
- Բեկիկ. — (շարունակելով) «Իմ սիրելի Պանտալէոնս, եթէ քու տիրոջը նոպան անցեր է...» Եթէ իմ նոպաս անցեր է:

- Պանտ. — Վերջը տեսնենք:
- Բենիկ. — « Ըսէ իրեն որ ես ձերբակալուած եմ
և թէ կը խնդրեմ իրմէ որ զիս պաշտպանէ:
Պաղտիկ »: Պաղտիկ, ինչ, Պաղտիկն է:
- Պանտ. — Ձերբակալուած է:
- Բենիկ. — Ի՛հ, շուտ, շուտ կեղծամս:
- Պանտ. — (մեկոռնաի) Շատ աղէկ (բարձր) Հրամ-
մէ տէր իմ, ասով ծածկեցէք զլուխնիդ, այս-
պէս աւելի շուտ կ'ըլլայ:
- Բենիկ. — Կրողը տանի... Ա՛հ, Պանտալէոն.
Կռիւի պիտի բռնուինք:
- Պանտ. — Լա՛ւ է, Լա՛ւ է, նախ ստիպողակա-
նին վրայ մտածէ... Այն խեղճ պարոն Պաղ-
տիկը:
- Բենիկ. — Ահա հոն կ'երթամ... այս պարա-
գայիս մէջ ուրեմն... բայց ի՛նչ հանդիպած
կրնայ ըլլալ... և վերջին նորոյթով. դու
պատժոյ արժանի ես: Տ՛ուր ինձ իմ գաւազանս:
- Պանտ. — Ահաւասիկ տէր իմ:
- Բենիկ. — Գաւազան մը փղոսկրէ կոթով. ո՛հ,
ա՛լ չափը անցաւ:
- Պանտ. — Բայց շուտով մեկնեցէք... շատ նե-
ղութեան մէջ պիտի ըլլայ:
- Բենիկ. — Կը թռչիմ ահա, բայց ի դարձիս, դու
պիտի չկարենաս ձեռքէս ազատիլ... Ակնոց,
գաւազան, կեղծամ, քեզմէ ա՛լ ուրիշ բան չեմ
ուզեր, վասն զի դեռ կը կասկածիմ որ դու
պիտի նեղացնես զիս քու անակնկալներովդ:
Երթամ ուրեմն տեսնելու թէ ինչ պատահած
պիտի ըլլայ այն բարի Պաղտիկին թագաւո-
րական Պահականոցի պաշտօնէութեան մէջ:
Ասկէ երկու քայլ է, երթալ գալս մէկ պիտի
ըլլայ:

ՏԵՍԻՒ, ՏԱՍՆՈՒԻՆՆԵՐՈՐԳ

Նոյներն, ՊԱՂՏԻՎ, ՈՍՏԻԿԱՆ ՄԸ և ԶԻՆՈՒՈՐՆԵՐ
նորանցքին մէջ

Պանտ. — (Ուշ դնելով) Լուսթիւն, լուսթիւն:
(դուռը կը բացուի, Պաղտիկ կը տեսնուի չորս
գինոշորնկերու մէջ, և ուտիկան մը):

Բենիկ. — Ա՛հ, պարոնայք, ինչպէս կ'ըլլայ որ...

Պաղտիկ. — (վախցած) Զգո՛յշ կեցէք, նա խենթ է:

Բենիկ. — Ի՛նչպէս, ես խե՞նթ եմ:

Պանտ. — (մեկուշտի) Ա՛լ ծիծաղելու կամք չու՛նիմ:

Ոստ. — Կը ճանչնա՞ք դուք այս մարդը:

Բենիկ. — Հարցնելու բան է. անտարակոյս, իմ
բարեկամս. Պ. Պաղտիկն է.

Պաղտիկ. — Ես չըսի՞ քեզի հոն:

Ոստ. — Լուսթիւն. մի՛ խօսիր:

Բենիկ. — Նա քիչ առաջ ինծի հետ ճաշ կ'ընէր,
բայց յանկարծ փախաւ, իբր թէ սատանան
փորը մտնէր:

Պաղտիկ. — Ես շատ իրաւունք ունէի այնպէս
ընելու:

Ոստ. — Մենք գիտենք քու իրաւունքդ:

Պաղտիկ. — (ցած Պանտալեոնիկն) Ըսէ՛, ուրեմն,
Պանտալէոն, մոլի նոպան անցած կ'երևի,
այնպէս չէ՞:

Ոստ. — Անոր հետ վերաբերութիւն, զայն ալ
ձերբակալեցէ՛ք:

Պանտ. — Ի՛նչ, զիս ձերբակալե՛լ, վայ՛ առաջին
ինծի դաշողին:

Բենիկ. — Տեսրք ես պատասխանատու եմ ա՛նոր...
բայց ըսէ՛ք ինձ, ուրեմն, ինչ որ պա՛տահած է:

Ոստ. — Ահաւասիկ: Քիչ առաջ մենք նշմա՛ւ

րեցինք Պահականոցէն այս մարդը՝ որ բոլոր ուժովը կը փախչէր տագնապալից՝ առանց գլխարկի, և գաղտուկ ետևը կը նայէր թէ արդեօք զինքը հալածող մը կ'այ: Այդ փախուստը մեզի նոր օրինակ տեսնուելով, կըրնամ ըսել կասկածելի, և նոյն իսկ անիմաստ փախուստ մը, անմիջապէս բռնեցինք զինքը, փնտռեցինք վրան և գտանք իր քովը արծաթէ սեղանի սպասներ: Հարցփորձի միջոցին, որ ամենախիստ կերպով կատարեցի, նա խոստովանեցաւ որ ձեր տունէն դուրս կու գար և մենք անարդար չհամարեցանք ըսելու, թէ այս արծաթէ սպասը ձերն ըլլայ: Ինչ որ մեր կասկածը կը հաստատէ այս պատրաստ սեղանն է, հետևաբար մենք դատարանին պիտի յանձնենք յանցաւորը, որպէս զի պատժուի զինուորական և քաղաքական խիստ օրէնքին համեմատ:

Պաղտիկ. — Բայց քանի որ ես ձեզի կ'ըսեմ...

Ոստ. — Լռութիւն մի խօսիր:

Բեկիկ. — Տիրաք, շատ շնորհակալ եմ ձեր ըրած մտադրութեանը, բայց այս սպասն իմս չէ:

Պաղտիկ. — Կը տեսնէ՞ք, ուրեմն...

Ոստ. — Լռութիւն, մի խօսիր: (Բեկիկիկն) դուք կը համարձակի՞ք պաշտպանել այն մարդը որ գողութիւն ըրած է ձեզմէ: Մի ընդդիմանայք ապա թէ ոչ զձեզ ալ կը ձերբակալեմ իբրև գողակից:

Պաղտիկ. — Բայց քանի որ նա ինքն է ձեզի ըսողը...

Ոստ. — Լռութիւն:

Պաղտիկ. — Ո՛հ, կրողը տանի, քու Լռութիւնդ ալ, գրեղ ալ, դուք միշտ իրաւունք կ'ունենաք:

Ոստ. — Ուսկի՞ց առիւր այս արծաթէ սպասը:

Պաղտիկ. — Արուեստակից ոսկերիչէ մը, նուէր տալու համար իմ բարեկամիս, ի պատիւ իր

սուրբին Բենեդիկտոսի, իր սլաշտպանին, որուն այսօր տօնախմբութիւնն է:

Բենիկ. — (կը վագե ողջագործելու հետը) Ի՞նչպէս, սիրելիս, ասիկա ինծի՞ համար գնեք ես:

Ոստ. — Լոռութիւն. ինչ է ձեր անունը:

Բենիկ. — Բենիկ կը կոչուիմ:

Ոստ. — Բենիկ, Ստուգիւ սպասին վրայ Բ. գիրը կայ:

Պաղտիկ. — Այո՛, ես փորագրել տուի զայն՝ որ իր անուան նախատառն է:

Ոստ. — Լոռութիւն, (Պաղտիկին) ինչո՞ւ համար այնպէս խենթաբար կը վագէիր երբ զքեզ ձերբակալեցինք:

Պաղտիկ. — Չթողու համար որ բարեկամս Պ. Բենիկ ականջներս կտրէ:

Բենիկ. — Ականջներ կտրե՞լ...

Պանտ. — (մեկուսի) Ա՛յի, այի, այի:

Ոստ. — Աւելորդ պատճառանքներ: Երթանք, երթանք ոստիկանապետին մօտ, որպէս զի այս խնդիրը որոշէ, ինչպէս որ ինքը լաւ տեսնէ:

Ամենքը. — Ոստիկանապետին մօտ:

Պանտ. — Օ՛ն ուրեմն, ո՛չ, ո՛չ, ո՛չ... Նա պիտի չերթայ. և որովհետև կը յամառեն չարչարելու այդ բարի մարդը, կը յայտարարեմ ձեզ որ ուրիշ յանցաւոր մը չկայ հոս բաց ի Փրանկիսկոս Պանտալէոն՝ ձեր ծառայէն:

Բենիկ. — Ի՞նչ կերպով ուրեմն:

Պանտ. — Որովհետև պատիւ պիտի ունենայի այսօր ձեր անուան տօնախմբութեան առթիւ ձեզի հետ ճաշելու, եթէ ուրիշ մը սեղանակից չըլլար ձեզի, պարոն Պաղտիկի յանկարծ վրայ գալովը՝ գաղափար մը ծնաւ մտքիս մէջ՝ զինքը ճաշէն հեռացնելու, հաւատացնել տալով իրեն որ դուք մերթ ընդ մերթ փափաք կ'ուսենաք մարդկանց ականջները կտրելու: Ահա ինչ որ ճշմարիտ է ձեզի կը խոստովա-

նիմ և կ'երդնում պատուոյս վրայ. փառք Աստուծոյ ըսածիս վկաներ կան: Հարցուցէք ամէնուն:

Պաղտիկ. — Ո՛հ, այս անգամ դու կրնաս պարծիլ յաջողապէս խաղացած ըլլալուդ համարքու դերդ, վասն զի ստուգիւ վախցուցիր զիս...

Բենիկ. — Ի՞նչպէս, չարածճի, այդ միամիտ կերպարանքովդ...

Պանտ. — Մի վստահիք շատ: Գուք լաւ գիտէք որ հանդարտ կեցած ջուրէն կը վախցուի:

Ոստ. — Օ՛ն ուրեմն, երկու կողմանէ ալ լսուեցաւ, ո՛չ վիրաւոր և ո՛չ ալ մեռնող կայ:

Բենիկ. — Բաց ի Պօրտոյի շիշէն՝ որուն վիզը պիտի կտարենք, եթէ յօժարիք օգնել մեզի:

Ոստ. — Օգնել ձեզի, մեր պարտականութիւնն է այդ, այնպէս չէ՞ ընկերներ:

Զինուորք. — Ա՛յնպէս է: (Պանտալեոն գինիս կը հրամցնէ Ոստիկանիս և զինուորներուն. որոնք խմելի վերջ բարև կու տան և կը մեկնին):

ՏԵՍԻԼ ՔՍԱՆԵՐՈՐԴ

ԲԵՆԻԿ, ՊԱՂՏԻԿ, ՊԱՆՏԱԼԵՈՆ

Բենիկ. — (բարձր ձայն խնդարով) Ո՛հ, իմ սիրելի Պաղտիկս, որչափ ցաւած եմ այս անհաճոյ դէպքին վրայ...

Պաղտիկ. — Ահաւասիկ վերջացաւ, բայց ի՞նչ պէտք ունէր սատան Պանտալեոնը իմ գլխուս այսպիսի խաղ մը խաղալու քեզի հետ ճաշել կարեւարու համար: Քեզմէ աւելի ծիծաղելի պիտի ըլլայի իրեն հետ սեղանակից ըլլալովս:

Պանոս. — Ի՞նչ, ստուգիւ, պիտի հաւանէի՞ք
ինծի հետ սեղան նստիլ:

Պաղտիկ. — Ես հիմա ալ հաւան եմ... Սեղան
բազմինք և դու պիտի տեսնես որ զոհ պիտի
մնամ:


Պանոս. — Լաւ ուրեմն, կ'ընդունիմ առաջարկդ:

Պաղտիկ. — Ստուգիւ, այս է միակ միջոցը,
կրած յուզմունքս փարատել տալու համար:


ԵՐԳ.


Ատոր վրայ կը պարծինք,
Թէ չենք վախցեր ո՛չ այնչափ.
Որքան հիմա կըրեցինք
Սըրտի յուզմունք և սարսափ:
Շնորհիւ կըրած երկիւղիդ
Որ սիրտդ ըրաւ ելևէջ
Փաստ քեզ ըլլայ աներկմիտ
Տեսնել օր մը կեանքիդ մէջ
Հընդկահաւ մի բերեալ ձօն
Որ միշտ յիշես զՊանտալէոն:

ՎԵՐՋ









ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0041952

ЦЕНА

AT
6026